Ազգ
Azg
23 ՅՈՒՆԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 115(4734)
ISSN: 1829-1651

## Կյանքը թանկացնող օրենքներ

Չնայած տարած-բերած «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» օրենքի նախագիծը եւ հարակից երկու նախագծերը, ըստ որոշ՝ մեզ համար անհասկանալի կանխատեսումների, պետք է առիթ դառնային էլ կառավարությանն անվստահություն հայտնելու, էլ ինչ գիտենք՝ ԱԺ լուծարման համար (կան միշտ մարդիկ, որոնք ցանկություններն ու իրականությունը շփոթում են), բայց Ազգային ժողովում փաթեթն առաջին ընթերցմամբ երեկ հանգիստ ընդունվեց 72 կողմ, 9 դեմ ձայներով: Փաստորեն՝ այդ փաթեթը նախատեսում է աղբահանության այնպիսի սակագներ, որոնք այս տարվա համեմատ կրկնակի թանկացում են նախատեսում: Ձայների 72 կողմ, 1 դեմ , 10 ձեռնպահով առաջին ընթերցմամբ ընդունվեց նաեւ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» օրենքի նախագիծը, որով 1 ժամ տրանսպորտային միջոցը ավտոկայանատեղիում կանգնեցնելն արժե 400 դրամ, մյուս սակագների մասին երեկ գրել ենք: Թեեւ այս վերջին օրենքը, եթե վերջնական ընդունվի ու ներդրվի՝ բազմաթիվ հարցականներ է առաջացնելու գործարկվելիս: **Մ. Խ.**

# Սերժ Սարգսյան. Հայաստանը Կազան է գնում առաջընթացի ակնկալիքով

*Քննարկել Ղարաբաղին առնչվող հարց նույն ղարաբաղցիների մասնակցությամբ*

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ, Ֆրանսիա**



Մեզ համար ամենակարեւոր հարցը շարունակում է մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ եւ արդարացի կարգավորումը: Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանն** այս մոտեցմամբ իր ելույթում անդրադարձավ ԼՂ հարցին՝ ելույթ ունենալով երեկ Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում որպես հրավիրյալ:

Կարեւորագույնը, որ տալիս է Եվրոպայի խորհուրդը եւ պետք է տա այդ հարցում, ըստ Սարգսյանի, հանդուրժողականության արմատավորումն է: Սակայն, ըստ նախագահի խոսքի, ընդամենը վերջերս, Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ Ադրբեջանի վերաբերյալ հերթական զեկույցը կրկին հաստատեց հայատյացության ու ռասիզմի ծայրահեղ աստիճանը այդ երկրում: «...Անհանդուրժողականության այդ թույնը ամենամեծ հարվածը հասցնում է հենց թույնը կրող հասարակությանը: Բայց սա մեզ նաեւ անհանգստության տեղիք է տալիս, քանի որ Ադրբեջանը մեր անմիջական հարեւանն է, մեր անմիջական հարեւանությամբ է դեռեւս չլուծված մնում ղարաբաղյան հակամարտությունը, եւ մենք կարեւորում ենք հակամարտության կարգավորման գործընթացում առաջ շարժվելու անհրաժեշտությունը»:

Հունիսի 24-ին տեղի կունենա Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների եռակողմ հանդիպումը: «Մենք խոսում ենք փոխզիջումների ճանապարհով հարցը լուծելու մասին: Բայց մեր դեպքում ստացվում է, որ զիջում պետք է կատարենք նրան, ով սպառնում է մեզ վրա կրակելու համար առիթի», ստրասբուրգյան ելույթում հայտարարեց Հայաստանի նախագահը: Նրա խոսքերով, նման իրավիճակում շատ բարդ կլինի որեւէ մեկի համար Հայաստանի հանրությանը, Ղարաբաղի հանրությանը՝ դարեր շարունակ այնտեղ բնակվող բնիկ հայ ժողովրդին համոզել, որ «անհրաժեշտություն է ինչ-ինչ զիջումներ անել մի երկրի, որտեղ հայի նկատմամբ կա նման անհանդուրժողականություն եւ կան ծայրահեղ ռասիստական տրամադրություններ»:

*Տես էջ 2*

**ԴԻՏԱՐԿՈՒՄ**

## Ինչո՞ւ է պարբերաբար հայտնվում Տիգրան Սարգսյանի հրաժարականի լուրը

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Անցած օրերին հերթական անգամ ՀՀՇ-ական լրատվամիջոցները շրջանառության մեջ դրեցին վարչապետ Տիգրան Սարգսյանի հրաժարականի լուրը: Չնայած իշխող Հանրապետական կուսակցությունը հերքեց դա, ընդդիմության վերոնշյալ հատվածը պնդում էր իրենը՝ բնականաբար, հենվելով միայն իրեն հայտնի իրազեկ «աղբյուրների» վրա: Դրանք հավանաբար այն նույն աղբյուրներն են, որոնք, ասենք, տեղյակ են լինում, թե Կրեմլում Մեդվեդեւը ինչ տոնով է խոսել Սերժ Սարգսյանի հետ կամ ինչ հայացքով է նայել նրան: Սակայն վերադառնանք Հայաստան:

Սկսած 2008-ի ապրիլից, ինչ վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը, պարբերաբար շրջանառության մեջ էր դրվում նրա պաշտոնանկության լուրը: Դժվար է արդեն հիշել, թե անցած երեք տարիների ընթացքում քանի անգամ այդ լուրը հայտնվեց վերոնշյալ քաղաքական ուժին պատկանող կայքերում կամ թերթերում: Տպավորությունն այնպիսին է, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունից ամենից շատ վարչապետի պաշտոնանկություն է երազում ՀԱԿ դարձած ՀՀՇ-ն: Տարօրինակ է, բայց, օրինակ, Հովիկ Աբրահամյանի կամ Արթուր Բաղդասարյանի եւ անգամ Սերժ Սարգսյանի հրաժարականի մասին նման լուրեր գրեթե չեն շրջանառվել: Դա իհարկե չի նշանակում, որ վերջիններիս ՀՀՇ-ն խնայում է, պարզապես վարչապետի մեջ են այդ ուժն ու նրա որոշ ղեկավարները տեսնում առավել մեծ վտանգն իրենց քաղաքական շահերի իրականացման տեսանկյունից: Սրան էլ պետք է գումարել 90-ականներին երկրի տնտեսության փլուզման հեղինակ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի աբիժնիկությունը: Մանրամասնենք:

*Տես էջ 3*

## Մսի պասսաժի տերը Երեւանի կոնսերվատորիայի ռեկտո՞ր

«**Ազգին**» հասած, բայց դեռեւս չհաստատված լուրերը պարզապես զարմացրեցին: Ըստ այդ լուրերի, հեղինակավոր մի շարք արվեստագետներ համապատասխան դրամական վարձատրության դիմաց բարեխոսություններ են արել բարձրաստիճան մի պաշտոնյայի մոտ, որպեսզի կոնսերվատորիայի պրոռեկտորներից (վեց պրոռեկտոր մի բուհո՞ւմ) Շահեն Շահինյանին նշանակեն կոնսերվատորիայի ռեկտոր: Երբ կրթության նախարարություն է հասնում այդ լուրը, շատ են զարմանում եւ տեղեկացնում են, որ ռեկտորի տեղի համար դեռեւս մրցույթ չի հայտարարվել: Հարցն այն է, որ վերոհիշյալ անձը Երեւանի Գումի շուկայի մսի պասսաժներից մեկի սեփականատերն է: Այդ լուրը շատ ցավագին է ընդունել նաեւ ներկայիս ռեկտորը, որը սրտի սուր ցավերով այժմ գտնվում է բուժման մեջ:

Մի՞թե հանրապետությունում չկա այնպիսի անվանի երաժիշտ, որը արժանի լինի այդ կարեւոր բուհում զբաղեցնելու ռեկտորի աթոռը, այլ ոչ թե մսի պասսաժ տնօրինողը:

**Ռ. Ռ.**

## ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը Կազանի հանդիպումից ԼՂ հիմնահարցի լուծում է սպասում

«Հույս ունենք, որ այս տարածաշրջանում կլինեն կայունություն ու խաղաղություն,Կազանի հանդիպումը հաջողությամբ կպսակվի ու կբերի հակամարտության լուծման», ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դը Բրիշամբոյի այս կարծիքը փոխանցել է «Ռիա նովոստին», իսկ կարծիքը հայտնվել է Մոսկվայում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ:

## Արման Սահակյանը նշանակվել է պետգույքի կառավարման վարչության պետ

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ ԱԺ ՀՀԿ խմբակցության ղեկավար, ՀՀԿ փոխնախագահի Գալուստ Սահակյանի որդին՝ ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Արման Սահակյանը, նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ:**

## Պաղեստինյան «Ֆաթհ» կազմակերպությունը հանդիպել է ՀՅԴ պատվիրակության հետ

Աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Պաղեստինի «Ֆաթհ» կազմակերպության ներկայացուցիչները երեկ ՀՅԴ «Քրիստափոր Միքայելյան» կենտրոնում հանդիպել են ՀՅԴ պատվիրակության հետ: Հիշեցնենք «Ֆաթհ»-ը մեր երկրում է Պաղեստինի օրենսդիր մարմնի անդամ, նախկին արտգործնախարար Նաբիլ Շաասի գլխավորությամբ: Ողջունելով հյուրին՝ ՀՅԴ պատվիրակության ղեկավար, ՀՅԴ բյուրոյի անդամ Լեւոն Մկրտչյանը խոսել է ՀՅԴ-«Ֆաթհ» սերտ համագործակցության մասին, մասնավորապես՝ Սոցինտերնում: Մկրտչյանն ընդգծել է, որ ՀՅԴ-ն «դրական կեցվածք ունի պաղեստինցի ժողովրդի արդար պայքարի նկատմամբ»: Նաբիր Շաասը նշել է, որ իրենց ցանկությունն է՝ «երկու բարեկամ երկրներում փոխադարձաբար բացել դեսպանատներ»: Ներկայացնելով պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման ներկա փուլը՝ Շաասը նշել է, որ սեպտեմբերին Պաղեստինը դիմելու է ՄԱԿ-ին՝ իր անկախությունը ճանաչելու խնդրանքով: Լեւոն Մկրտչյանը նշել է, որ ՀՅԴ-ն պատրաստ է միջազգային ատյաններում աջակցել պաղեստինցի ժողովրդի արդար պայքարին: Հանդիպման վերջում Նաբիլ Շաասը ՀՅԴ-ի ներկայացուցիչներին հրավիրել է Պաղեստին:

Մինչ հանդիպումը՝ «Ֆաթհ»-ի պատվիրակներն այցելել են Ծիծեռնակաբերդ ու հարգանքի տուրք մատուցել զոհվածների հիշատակին: **Հ. Ա.**

# Մինսկի խումբը Կազանում նախատեսվող Սարգսյան-Ալիեւ հանդիպումից առաջ վերստին լավատեսություն է դրսեւորում

*Չի բացառվում, որ հանդիպումից հետո նորից ափսոսանք հայտնի կարգավորման պատեհ առիթը բաց թողնելու համար*

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

Ամեն անգամ, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պատրաստվում են բանակցային նոր հանդիպման, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարներն ու համանախագահները լավատեսական տրամադրություններով ասպարեզ են իջնում: Նրանք ոչ թե կանխատեսում են, այլ կանխագուշակում, թե առաջիկա հանդիպումը կհանգեցնի լուրջ արդյունքի, ուստի եւ հեռու չէ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը:

Այս առումով բացառություն չի կազմում հունիսի 25-ին Կազանում ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հովանավորությամբ նախատեսվող Սարգսյան-Ալիեւ 9-րդ եռակողմ հանդիպումը: Թերեւս միակ տարբերությունն այն է, որ այս հանդիպումից «սպասումները մեծ են», ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ակնկալում են ստորագրված տեսնել հաշտության համաձայնագրի համար հիմք հանդիսացող որեւէ փաստաթուղթ:

Կկայանա՞ այդ համաձայնությունը, թե՞ ոչ՝ ցույց կտա առաջիկա հանդիպումը: Բայց որ Մինսկի խմբի համանախագահող երկրները՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, այսպես կոչված կենսական շահեր հետապնդելով Հարավային Կովկասում, հանուն ազդեցության անհաշտ մրցակցություն են ծավալում միմյանց հետ, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության տեղն ու դերը առանցքային նշանակություն ունեն մրցակցող կողմերի համար, կասկած չի հարուցում:

Ակնհայտ է, որ հակամարտության ամերիկյան կամ ֆրանսիական նախաձեռնությամբ կարգավորման դեպքում աննախադեպ կամրապնդվեն համապատասխանաբար ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի, որի միջոցով էլ թերեւս Եվրոմիության դիրքերը, ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, այլեւ Հարավային Կովկասի ողջ տարածքում:

Քանի որ Ռուսաստանն արդեն ամուր դիրքեր ունի, որոնք հարավօսական պատերազմից հետո էլ ավելի են ամրապնդվել, ուստի հակամարտության Մոսկվայի նախաձեռնությամբ կարգավորումը կնշանակի ռուսական ազդեցության լիարժեք տարածում Հարավային Կովկասում: Դրանով վերջ կգտնի անհաշտ մրցակցությունը ԱՄՆ-ի հետ, տարածքից դուրս կմղվի նաեւ Ֆրանսիան, այսպիսով նրանք պարտված լինելով մրցակցությունում, կզրկվեն ոչ միայն Ռուսաստանին Հարավային Կովկասից վտարելու, ավելին՝ նրա հետ նույնիսկ նոր մրցակցության մեջ մտնելու հնարավորությունից:

*Տես էջ 3*

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

# Սերժ Սարգսյան. Հայաստանը Կազան է գնում...

*1-ին էջից*

**Բայց Հայաստանը Կազան է գնում առաջընթացի ակնկալիքով: «Վերջնական պայմանավորվածությունների ձեռքբերումն ու դրանց լիարժեք իրականացումը հնարավոր է միայն, երբ վերանան հայատյացության ու ռասիզմի դրսեւորումները Ադրբեջանում, եւ ձեւավորվի վստահության մթնոլորտ», իր կեսժամյա ելույթում նշեց նախագահ Սարգսյանը: «Բնականաբար, չի կարող հարցական տակ դրվել Ղարաբաղի ժողովրդի՝ ազատ եւ անվտանգ ապրելու, իր հողի վրա սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու ի վերուստ տրված իրավունքը»:**

**Եվրոպայի խորհրդից էլ, Հայաստանի նախագահի ներկայացմամբ, ակնկալվում է նախ «չվնասել գործընթացը» ոչ լիարժեք տեղեկացված քննարկումներով՝ նկատի ունենալով ԵԱՀԿ Ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի՝ հայաստանյան պատվիրակության կողմից բոյկոտված գործունեությունը: Իսկ օգնել ԵԽ-ն, ըստ Սարգսյանի, կարող է. «Ժամանակը չէ՞ արդյոք, որ Եվրոպայի խորհուրդը ուղղակիորեն աշխատի (Ղարաբաղի այսօրվա հանրությունը եվրոպական հանրության՝ եվրոպական ընտանիքի մասնիկ է-Ս. Ս.) Ղարաբաղի հետ՝ իր իսկ գործառույթների կարեւորագույն դաշտով՝ մարդու իրավունքների պաշտպանություն, քաղաքացիական հասարակության ձեւավորում, ժողովրդավարություն, հանդուրժողականություն եւ այլն: Եվ չի՞ լինի արդյոք շատ ավելի տրամաբանական, եթե Ղարաբաղի հետ աշխատանք սկսելուց հետո միայն կառույցը ցանկություն հայտնի քննարկելու Ղարաբաղին առնչվող որեւէ հարց, ի դեպ՝ նույն ղարաբաղցիների մասնակցությամբ»:**

## Այլեւս ե՞րբ կբացվի հնարավորության պատուհանը...

**Անդրադառնալով հայ-թուրքական գործընթացին՝ Սերժ Սարգսյանը նշեց, որ միջազգային հանրության սատարմամբ էլ երկու տարվա գործընթացը մնաց փակուղի մեկ պատճառով. Թուրքիան վերադարձավ նախապայմանների առաջադրման իր գործելաոճին: «Չեմ կարող կանխատեսել, թե հիասթափության եւ անվստահության պատին դեմ առնելուց հետո այլեւս երբ կբացվի հնարավորության պատուհանը: Ցավով եմ ասում, բայց սա է իրականությունը»: Նախագահն ընդգծեց. «Հայաստանը նախաձեռնեց գործընթացը բարի նպատակներով՝ անսալով ազգերի եւ պետությունների խաղաղ գոյակցության 21-րդ դարի հրամայականին: Եվ դա այն պայմաններում, երբ Օսմանյան կայսրությունում 1915 թվականին հայերի նկատմամբ իրագործած ցեղասպանությունը Թուրքիան առ այսօր ոչ միայն չի ճանաչել, այլեւ իրականացնում է բացահայտ ժխտման քաղաքականություն: Մինչդեռ համայն հայությունը սպասում է համարժեք գնահատականի, եւ այդ նպատակով այսուհետեւ եւս մեր ջանքերը՝ անխոնջ ջանքերը, լիահույս եմ՝ նաեւ մարդկության դեմ հանցագործություններով մտահոգվածների ջանքերը, ուղղված կլինեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը»:**

**Այդուհանդերձ, Հայաստանը կարեւորում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ոչ միայն հայերի եւ թուրքերի համար, այլեւ տարածաշրջանում, ողջ Եվրոպայում խաղաղության, կայունության եւ համագործակցության մթնոլորտի հաստատման առումով: «Հայաստանի անօրինական շրջափակմանը պետք է վերջ դրվի»:**

## «Իշխանությունն ու ընդդիմությունը թշնամի չեն»

**Քսան տարի առաջ անկախություն հռչակած եւ տասը տարի առաջ Եվրոպայի խորհրդի անդամ դարձած Հայաստանը, ըստ նախագահի, վերահաստատել է «իր պատմական ու մշակութային պատկանելությունը եվրոպական ժողովուրդների ընտանիքին»: «Եվրոպային մերձենալու մեր ճանապարհը ո՛չ միայն ունի առանձնահատկություններ, որոնք բնական են, այլեւ լրացուցիչ բարդություններ, որոնք բնական չեն, օրինակ՝ Հայաստանի դեմ իրականացվող արհեստական եւ ապօրինի շրջափակումը մեր երկու հարեւանների կողմից»:**

**Եվրոպայի խորհրդին գնահատելով որպես Հայաստանի համար առանցքային գործընկերոջ պետականաշինության եւ ժողովրդավարության կայացման գործում, Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց 2008-ի մարտյան իրադարձությունների հետեւանքները հաղթահարելու ուղղությամբ ԵԽ-ի ցուցաբերած աջակցության համար:**

**«Մենք սովորում եւ մեզանում քայլ առ քայլ արմատավորում ենք, որ իշխանությունն ու ընդդիմությունը թշնամիներ չեն, եւ պարտադիր չէ, որ ուժեղն իր ուժը ցույց տալու համար անպայման տրորի դիմացինին», հայտարարեց ՀՀ նախագահը, ավելացնելով, որ Հայաստանը նաեւ հանդուրժողականություն է սովորում եւ երկխոսության մշակույթ ձեւավորում: Շեշտելով իրավական բարեփոխումները՝ Սարգսյանը հայտարարեց. «Այսօր մեր պետական-քաղաքական օրակարգում նաեւ կոռուպցիոն ռիսկերի եւ բյուրոկրատական ընթացակարգերի վերացման նպատակով ողջ օրենսդրության համակողմանի վերանայման խնդիրն է դրված: Ստեղծվել եւ արդյունավետորեն գործում են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ու Հակակոռուպցիոն մոնիտորինգի հանձնաժողով»:**

**Հայաստանի նախագահի մտացմամբ, հաջորդ տարի տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունները կարեւոր հանգրվան են, իսկ դրանք ոչ միայն պետք է արդար ու ազատ լինեն, այլեւ այդպիսին ընկալվեն հասարակության կողմից:**

# ԵԽԽՎ թուրք նախագահը պարզունակ աղավաղմամբ է զբաղված

ԵԽԽՎ նախագահ Մեւլութ Չավուշօղլուի հայտարարությունը, թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կապված է ղարաբաղյան խնդրի կարգավորման հետ եւ իբր թե բանավոր համաձայնություն է եղել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ, ըստ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի՝ պարզունակ աղավաղում է: «Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը սկսվել եւ ընթացել է այն փոխըմբռնմամբ, այն փոխհասկացողությամբ, որ այդ կարգավորումը պետք է լինի առանց նախապայմանների եւ հենց այդ պատճառով ստորագրված արձանագրություններում չկա որեւէ նախապայման», Ստրասբուրգում լրագրողների հետ զրույցում հայտարարեց **Նալբանդյանը**:

Ինչ վերաբերում է Չավուշօղլուի մեկ այլ հայտարարությանը, թե Կազանի հանդիպման արդյունքների հետ է կապվում հայ-թուրքական գործընթացը, Նալբանդյանը հիշեցրեց, որ դեռեւս ցյուրիխյան ստորագրումից անմիջապես հետո, «երբ թուրքական կողմը վերադարձավ նախապայմանների լեզվին, ասացի, որ եթե խոսենք նախապայմանների լեզվով, ապա Հայաստանը ոչ պակաս, առավել հիմնավորված նախապայմաններ կարող է ունենալ»: **Ա. Հ.**

Կազանում ներկայացվելիք փաստաթուղթը հայկական կողմի երազածը չէ, բայց հնարավորություն է տալիս ձեռնամուխ լինելու մեծ, հիմնական պայմանագրի նախապատրաստման աշխատանքներին: «Դժվար է Կազանում եռակողմ հանդիպման առնչությամբ միայն դրական արդյունքի վստահություն ունենալ: Բայց վստահ եմ, որ Մինսկի խումբը ճիշտ այն ձեւաչափն է, որ կարող է լինել այս խնդրի լուծման միջնորդ», ԵԽԽՎ-ում ելույթից հետո պատասխանելով Ռենե Ռուքյեի (Ֆրանսիա) հարցին՝ այսպես արձագանքեց Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**:

# Կազանի փաստաթուղթը «հայկական կողմի երազածը» չէ

## *ՀՀ նախագահը պատասխանում է հարցերին*



«Փաստաթղթի վրա, որ քննարկվելու է Կազանում, բավականին աշխատանք է տարվել, արդեն մեկ տարուց ավելի է, որ սկզբունքների այդ տարբերակը սեղանին է, բազմաթիվ հանդիպումներ են եղել: Եթե հանդիպենք կառուցողական մոտեցման, ադրբեջանական կողմը լրացուցիչ նոր առաջարկություններով հանդես չգա, կարծում եմ, որ կարող ենք ակնկալել դրական արդյունքներ»:

Հայաստանի նախագահին իրենց հարցերն ուղղելու համար հերթագրվել էր 26 պատգամավոր, սակայն հնչեց միայն 7-ը, եւ ոչ մի ադրբեջանական, թեեւ հինգը հերթագրվել էին: Բայց նույն ղարաբաղյան թեմայով **Վալերի Պարֆյոնովի** (Ռուսաստան)՝ առաջընթացին խոչընդոտող գործոնների մասին հարցին Սերժ Սարգսյանը մանրամասնեց, որ մադրիդյան առաջարկների հիմքում դրված երեք հայտնի սկզբունքները Հայաստանը հասկանում է այլ կերպ, քան ադրբեջանցիները: Նախագահի բացատրությամբ, «Ադրբեջանը ռազմատենչությամբ խախտում է այդ սկզբունքներից մեկը: Հայաստանն էլ ընդունել, ընդունում եւ ընդունելու է տարածքային ամբողջականության սկզբունքը: Այդ պատճառով է նաեւ, որ Հայաստանի կառավարությունը երբեք որեւէ անգամ տարածքային որեւէ պահանջ չի ներկայացրել ոչ միայն Ադրբեջանին, այլեւ որեւէ այլ երկրի, եւ այդ պատճառով է նաեւ, որ Հայաստանի Հանրապետությունը դեռեւս չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը»: Ավելին, ըստ նախագահի, Ադրբեջանն ազգերի ինքնորոշման իրավունքը հայտարարում է, թե ընդունում է, բայց Ադրբեջանի տարածքային ամբողջականության սահմաններում. «Դա խուզած ինքնորոշման մասին է խոսքը»:

**Սեսիլիա Կեավինեյի** (Իռլանդիա)՝ անհանդուրժողականության մասին հարցին էլ Սերժ Սարգսյանն արձագանքեց փաստով, որ 1995-ից Հայաստանը խոսում է փոխզիջումային կարգավորման մասին, բայց այդպիսի հայտարարություն երբեւէ չի արվել Ադրբեջանի որեւէ պաշտոնյայի կողմից: Իսկ այն, որ այսօր Հայաստանի եւ Ադրբեջանի զինված ուժերում ծառայում են, հատկապես Ադրբեջանում, թշնամության մթնոլորտում մեծացած երիտասարդներ, եւս մեկ անգամ կարեւոր է Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների դովիլյան հայտարարությունն առ այն, որ ժողովուրդներին պետք է պատրաստել խաղաղության, այլ ոչ պատերազմի: Խաղաղության պատրաստելու հարցում առավելություն ունի Հայաստանը, բայց, ըստ նախագահի, եթե ռազմական գործողությունները վերսկսվեն՝ առավելություն կարող է ստանալ Ադրբեջանը, քանի որ իր բնակչությանը պատրաստում է պատերազմի:

**Գրիգոր Պետրենկոյի** (Մոլդովա)՝ առանց Հայաստանի պատվիրակության անօգուտ դարձած ԵԽԽՎ ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի առնչությամբ հարցին էլ ի պատասխան Սերժ Սարգսյանն իր աջակցությունը հայտնեց ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակության որոշմանը, ընդգծելով, որ առանց հայկական պատվիրակության անօգուտ դարձած ենթահանձնաժողովի աշխատանք կազմակերպելուց առաջ պետք է մտածեին այդ մասին: Այդուհետեւ Հայաստանի նախագահի արտահայտած միտքը քիչ տարօրինակ էր. «Եթե վեհաժողովին հաջողվի իր պատերի ներսում Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակությունների փոխադարձ մեղադրանքները բացառել, կարծում եմ, շատ մեծ եւ դրական ազդեցություն կունենա ընդհանրապես»:

**Անդրե Բուգնոնի** (Շվեյցարիա) հարցը վերաբերում էր տարածաշրջանի առումով հայկական ատոմակայանի անվտանգությանը: Հայաստանի նախագահը վստահեցրեց, որ մասնագիտական կառույցների կողմից հայկական ատոմակայանի անվտանգությանը բավարար գնահատական է տրվել: «Չնայած բավարար է, մենք շարունակելու ենք մեր ջանքերը ՄԱԳԱՏԷ-ի հսկողության ներքո: Հայկական ատոմակայանի գործունեությունը մեծ ռիսկեր չի պարունակում տարածաշրջանի ժողովուրդների համար, տարածաշրջանի ժողովուրդների համար մեծ ռիսկեր են պարունակում այլ էներգիայի աղբյուրներից ստացված գերշահույթները, որոնք, ցավոք սրտի, դառնում են սպառազինության անվերահսկելի գնումների աղբյուր: Հայաստանը, շրջափակված երկու պետությունների կողմից, չունենալով էներգակիրներ, ուղղակի պարտադրված է օգտվել ատոմային էներգիայի աղբյուրներից»:

Հայաստանի նախագահին հարց ուղղեց նաեւ **Զարուհի Փոստանջյանը**: Նշելով, թե Հայաստանում ձեւավորվել է ավտորիտար ռեժիմ, կեղծվել են ընտրություններ, Փոստանջյանը հետաքրքրվեց, թե արդյոք Սերժ Սարգսյանը չի՞ ցանկանում նախաձեռնել արդար ընտրություններ եւ հեռանալ: «Համամիտ չեմ ձեր կարծիքին, բայց հարգում եմ», արձագանքեց նախագահը, ավելացնելով, որ ԵԽ-ում ԵԽԽՎ նախագահի, ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցող Ջոն Պրեսկոտի, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի, ԵԽ գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հետ իր հանդիպումներում արտահայտված կարծիքները չեն համընկնում Փոստանջյանի խոսքերի հետ: «Ոչ, ես չեմ պատրաստվում արտահերթ ընտրություններ անցկացնել Հայաստանում, որովհետեւ չկա դրա անհրաժեշտությունը, եւ մեր սահմանադրությունն էլ թույլ չի տալիս հեշտությամբ անցկացնել արտահերթ ընտրություններ»:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ, Ֆրանսիա**

# Սոցիալական բնակարանային ոլորտում հայ-հոլանդական համագործակցություն

**ԱԽ քարտուղար, Հայաստանի Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի (ԱՍԲԱ) խորհրդի նախագահ Արթուր Բաղդասարյանը Նիդեռլանդներ կատարած այցի շրջանակներում հանդիպել է Հոլանդիայի մի շարք սոցիալական բնակարանային հիմնադրամների եւ կազմակերպությունների ղեկավարների հետ:**

**«Վոռնբորն» սոցիալական բնակարանային կազմակերպության խորհրդի նախագահ Բերտ վան Նյուվենհայզենի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել սկսելու լայնածավալ համագործակցության ծրագիր՝ օգտագործելով այս բնագավառում հոլանդական լավագույն փորձը: «Վոռնբորնը» կաջակցի Հայաստանում բնակշինարարության ոլորտում ենթակառուցվածքների զարգացման ռազմավարության մշակման հարցերում, ինչպես նաեւ կցուցաբերի տեխնիկական եւ փորձագիտական աջակցություն Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի կարիքների գնահատման եւ հետագա զարգացման գործընթացում:**

**Եվրոպական «Սեկոդասի» ղեկավարության հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել սկսելու բանակցային գործընթաց Հայաստանի Ազգային բնակարանային ասոցիացիայի՝ «Սեկոդասի» ասոցացված անդամ դառնալու շուրջը: «Սեկոդասը» սոցիալական բնակարանային հիմնադրամները միավորող համաեվրոպական ցանց է, որին անդամակցում են ԵՄ անդամ 27 երկրներ: Կազմակերպության փոխնախագահ Ռուդի դե Յոնգի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում իրականացնելու սոցիալական բնակարանային համակարգի զարգացման ծրագիր՝ բնակարանային հիմնադրամների համաեվրոպական ցանցի ֆինանսական եւ տեխնիկական աջակցությամբ:**

**Այնուհետեւ Հայաստանի Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի խորհրդի նախագահ Արթուր Բաղդասարյանը եւ «Հոլանդական միջազգային բնակարանային երաշխիքներ» հիմնադրամի նախագահ Էրիկ Բերժեն ստորագրել են պայմանագիր Հայաստանում սոցիալական բնակարանային ոլորտում ներդրումային ծրագրերի պորտֆելի ձեւավորման համար՝ առաջին փուլում շուրջ երեք միլիոն եվրո ընդհանուր ծավալով աջակցություն, որն ուղղվելու է Հայաստանում ցածր եւ միջին եկամուտներ ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը: Այս ծրագրերի կենսագործման համատեքստում «Գրին վեստ» սոցիալական բնակարանային կազմակերպության հետ քննարկվել եւ հաստատվել է ԱՍԲԱ-ի ներդրումային ծրագրերին երաշխիքներ տրամադրելու հարցը, իսկ «Նորհուս» շինարարական կոնցեռնի հետ քննարկվել է Հայաստանում նորագույն տեխնոլոգիաներով բնակարանային շինարարության հարցը, ինչը կնպաստի սոցիալական բնակարանների մատչելիության բարձրացմանը: Առաջին սոցիալական բնակարանները կսկսվեն կառուցվել արդեն այս տարվա աշնանը: Ծրագրի առաջին փուլում ընդգրկված են Դիլիջան, Աշտարակ, Ապարան, Հրազդան եւ Վեդի քաղաքները, որտեղ նախատեսվում է առաջին երեք տարում կառուցել մինչեւ 1000 բնակարան ցածր եկամուտներ ունեցող անձանց համար:**

**ԱԽ մամուլի գրասենյակ**

ԱԶԳ

## Անցուդարձ

Հունիսի 22-ին Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում տոնական տրամադրություն էր:

2010-2011 ուստարվա՝ հունիսի 14-ին եւ 15-ին մագիստրոսական թեզեր պաշտպանած 97 շրջանավարտներին նվիրված հանդիսավոր արարողությունն սկսվեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ եւ «Հայր մեր»-ով:

Շրջանավարտներին շնորհավորելու էր եկել ՀՀ վարչապետ, Մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահ **Տիգրան Սարգսյանը**:



# ՀՀ վարչապետը դիպլոմներ հանձնեց մագիստրոսներին



Նա գերազանցության դիպլոմներ հանձնեց լավագույն 13 մագիստրոսներին, անմոռանալի ու հիշարժան պահ, որը շրջանավարտները երկար կպահեն իրենց հիշողություններում:

Շնորհավորելով շրջանավարտներին հիասքանչ օրվա կապակցությամբ՝ վարչապետն ասաց. «Ձեր կյանքում բացվում է մի նոր՝ պատասխանատու էջ: Համալսարանում ստացած գիտելիքները պետք է կարողանաք կիրառել կյանքում՝ ուսուցանելով մատաղ սերնդին՝ որպես մեր ազգի ապագայի, եւ բարձր պահելով մանկավարժական համալսարանի հեղինակությունը: Մենք մշտապես ուշադրության կենտրոնում ենք պահելու մեր շրջանավարտների կարիերան, որովհետեւ դպրոցների գործունեությունը մեծապես պայմանավորված է նրանց աշխատանքով»:

Այնուհետեւ շնորհակալական խոսք ասացին շրջանավարտներ Նելլի Բիլյանը, Լիլիա Ջալալյանը եւ չինացի Ժիաո Նան:

Միջոցառման ընթացքում համալսարանի երգչախմբի կատարմամբ հնչեցին ՀՀ, ՀՊՄՀ եւ Երիտասարդների միջազգային օրհներգերը:

Միջոցառմանը ներկա էին նաեւ ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը, պաշտոնատար այլ անձինք եւ համալսարանի խորհրդի կազմը:

Արարողությունից հետո համալսարանի խորհրդի անդամների եւ ղեկավարության մասնակցությամբ տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր Տիգրան Սարգսյանը:

Քննարկվեց խորհրդի առաջիկա նիստի օրակարգը, որը մասնավորապես անդրադառնալու է համալսարանի զարգացման 2011-15 թթ. ռազմավարական ծրագրին:

Աշխատանքային խորհրդակցության ժամանակ անդրադարձ կատարվեց համալսարանի լսարանային ֆոնդի վիճակին:

Աննախադեպ էր նաեւ հունիսի 7-ը, երբ Մանկավարժական համալսարանի այս տարվա 2300 շրջանավարտները մեկ օրում ստացան իրենց ավարտական դիպլոմները, որոնցից 10 լավագույններին դիպլոմները հանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը: Այսպիսով մանկավարժական համալսարանում շրջանավարտներին ճանապարհելու մի նոր ու գեղեցիկ ավանդույթի սկիզբը դրվեց:

**Ս. Ս.**

ԴԻՏԱՐԿՈՒՄ

# Ինչո՞ւ է պարբերաբար հայտնվում Տիգրան Սարգսյանի հրաժարականի լուրը

*1-ին էջից*

**Հասարակական դժգոհությունները մեր երկրում հիմնականում պայմանավորված են սոցիալական վիճակով եւ պետական կառույցների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակով՝ ապօրինի գումարների շորթմամբ, անհարկի քաշքշուկներով, նյարդայնացնող մոտեցմամբ: Բնականաբար, հենց այս գործոններն էլ պարարտ հող են իշխանություններից մարդկանց՝ հիմնականում արդարացի դժգոհության համար: Ինչն էլ օգտագործում է նույն ընդդիմադիր քաղաքական ուժը: Դա նույնպես բնական պետք է համարել, քանի որ ամբողջ աշխարհում նույն գործընթացն է տեղի ունենում: Խնդիրն այն է, որ մեզ մոտ ՀԱԿ-ն պարզապես բարոյական իրավունք չունի խոսելու այլոց վատ լինելու մասին, քանի որ իր իշխանության տարիների դժոխքը քիչ թե շատ խելամիտ մարդիկ չեն կարող մոռանալ: Ինչեւէ:**

**Եվ ահա հենց վարչապետ Տիգրան Սարգսյանի կառավարության կողմից կատարվում են քայլեր, որոնք զրկում են ՀԱԿ-ին օգտվելու մարդկանց դժգոհությունը հարուցող գործոններից: Կարելի է թվարկել հանրային ծառայությունների ամբողջական ոլորտներ, որտեղ այս կառավարության կողմից կատարվել են ընթացակարգերի պարզեցումներ եւ հստակեցումներ: Դրանք են՝ մեքենաների տեխզննման, պետական հաշվառման, հատուկ ծառայությունների մատուցման (գերեզմանոցներ) պարզեցումը, տարատեսակ բժշկական տեղեկանքների տրամադրման վերացումը, նոտարիատում, քաղաքացիական ակտերի գրանցման ոլորտում եւ անձնագրային բաժիններում սկսված բարեփոխումները եւ այլն: Տնտեսության ոլորտում հարկային հաշվետվությունների մի մասի վերացումը, որոշ մասի ամսականից եռամսյակային դարձնելը, վճարման էլեկտրոնային դաձնելը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատումը եւ այլն: Անելիքներ, իհարկե, դեռ շատ կան, բայց արվածն արդեն իսկ ՀԱԿ-ական շրջանակներին վախ է ներշնչում, որ այսպես շարունակվելու դեպքում մարդկանց դժգոհությունները, հետեւաբար եւ դրանք օգտագործելու իրենց հնարավորությունները նվազելու լուրջ պատճառ կունենան:**

**Մյուս կողմից էլ, տնտեսության դիվերսիֆիկացումը եւ տեղական արտադրության զարգացման համար կառավարության կողմից որոշակի արտոնությունների տրամադրումը մեր տնտեսության մեջ ավելի է մեծացնում արդյունաբերության մասնաբաժինը: Ապացույց, մայիս ամսվա մակրոտնտեսական ցուցանիշները, ըստ որոնց, արդյունաբերությունը նախորդ տարվա մայիսի նկատմամբ ավելի քան 25 տոկոս աճ է արձանագրել: Արդյունաբերության զարգացումը շարունակվելու դեպքում հասկանալի է, որ սոցիալական որոշակի դժգոհություններ են վերանալու: Կրկին նշենք, որ սա չի նշանակում աղքատության վերացում, բայց հաստատ նշանակում է լուրջ քայլ այդ ուղղությամբ:**

**Գործող վարչապետի կողմից կոնկրետ փոփոխություններ իրականացնելու հենց այս քաղաքականությունն է, որ զայրացնում եւ նրա հրաժարականը երազելու պատճառ է դարձել ՀԱԿ-ականների համար:**

**Ինչ վերաբերում է Հրանտ Բագրատյանի կեցվածքին, ապա դրա պատճառն այն է, որ ոչ մի հարցում չեն իրականանում երկրի տնտեսության մոտալուտ փլուզման մասին նրա կանխատեսումները այս կառավարության եւ այս վարչապետի ժամանակ: Ձախողված գործչի համբավ ունեցող նախկին վարչապետը չի կարողանում մոռանալ նաեւ, որ իր վարչապետության տարիներին, իր իսկ նախագահը (Լեւոն Տեր-Պետրոսյանը) սովետական ռուբլուց հրաժարվելու վարչապետի անմիտ համառությանը հակառակ, ստիպված եղավ համաձայնել այն ժամանակ ընդդիմադիր Տիգրան Սարգսյանի, ինչպես նաեւ ԿԲ նախագահ Բագրատ Ասատրյանի՝ հայկական դրամին անցնելու առաջարկին: Հակառակ դեպքում, Հայաստանը, լինելով սովետական ռուբլին շրջանառության մեջ թողած միակ նախկին խորհրդային հանրապետությունը, դառնալու էր այդ ռուբլու աղբավայր՝ դրանից բխող սոցիալ-տնտեսական ծանր հետեւանքներով:**

**Ասվածը երեւի թե բավարար է հասկանալու համար, թե ինչու են պարբերաբար հայտնվում Տիգրան Սարգսյանի հրաժարականի լուրերը: Մինչ հաջորդ ընտրությունները դրանք էլի կհայտնվեն, բայց երեւի թե պարզ է, որ իմաստ չկա դրանց մեջ հավաստիություն կամ լրջություն փնտրելու:**

# Մինսկի խումբը Կազանում նախատեսվող Սարգսյան-Ալիեւ հանդիպումից առաջ վերստին լավատեսություն է դրսեւորում

*1-ին էջից*

Այլ կերպ՝ որքան էլ «մեծ սպասելիքներով» որեւէ փաստաթղթի ստորագրման հավանականությունների մասին Կազանի հանդիպումից առաջ արված հայտարարությունները ընդհանուր լինեն Մինսկի խմբի երեք երկրների համար, նրանցից ԱՄՆ-ին եւ Ֆրանսիային ամենեւին էլ ձեռնտու չպետք է լինի այդպիսի փաստաթղթի ռուսական նախաձեռնությամբ, այն էլ՝ Ռուսաստանի տարածքում ստորագրումը:

Այսինքն՝ նրանք, այդ թվում՝ Ռուսաստանը, անկախ բովանդակության ընդհանրությունից, բոլորովին անկեղծ չեն իրենց հայտարարություններում: Ընդհակառակը՝ դեռ հակամարտության կարգավորումը մի կողմ, բացի սեփականից՝ նույնիսկ չեն հանդուրժում բանակցային հանդիպում կազմակերպելու այլ նախաձեռնություն: Այդ իսկ պատճառով էլ կողմերից մեկի նախաձեռնությանը մյուս երկուսը հակադրվում եւ համատեղ ջանքերով դա չեզոքացնում են: Թեեւ դրա հետեւանքով բանակցային գործընթացը վերադառնում է ելման կետ: Սակայն միմյանց նախաձեռնությունը չեզոքացնելու համար ջանք գործադրողները, մոռանալով իրենց լավատեսական հայտարարությունները, չեն խորշում ափսոսանք հայտնել Սարգսյան-Ալիեւ հանդիպման հերթական առիթը բաց թողնելու առնչությամբ: Նրանց է միանում հանդիպման նախաձեռնող Ռուսաստանը:

Սա նշանակում է, որ Մինսկի խմբի համանախագահող երկրները նախապես քաջ գիտեն ինչպես անհաշտ մրցակցության ընթացքի, այնպես էլ ղարաբաղյան հակամարտության կարգավորման նախաձեռնությունների կարեւորության մասին, ուստի նրանց համար միանգամայն կանխատեսելի է նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի բանակցային հանդիպման ելքը՝ հատկապես, երբ դա անց է կացվում ՌԴ նախագահի հովանավորությամբ հենց Ռուսաստանի տարածքում:

Որքան էլ ադրբեջանցին լինի բորենիների ոհմակ, այլ ոչ թե պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրություն, այսինքն՝ ժողովուրդ, այս ամենին քաջատեղյակ է նաեւ ադրբեջանական ոհմակը: Այդ իսկ պատճառով բանակցային յուրաքանչյուր հանդիպումից հետո, հատկապես ՌԴ նախագահի հովանավորությամբ կազմակերպված, ապավինում է Մինսկի խմբի երկրներից ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի ներողամտությանը եւ սահմանային շփման գծում գործի է դնում դիպուկահարների, որպեսզի վայելի հայ զինծառայող սպանելու «հաճույքը»:

Զուգահեռ դրան, Ադրբեջանի ղեկավարությունը աշխարհով մեկ պատերազմը վերսկսելու վայնասուն է բարձրացնում: Թեեւ վայնասունները ապարդյուն են անցնում, սակայն ադրբեջանցի հրոսակը չարագործությունից չի հրաժարվում, ոչ էլ պատժում են նրան: Ավելին՝ ԱՄՆ-ն, Ֆրանսիան զսպվածության ընդհանուր կոչ անելով, հավասարության նշան են դնում մարդասպան ստահակի եւ հայկական կողմի միջեւ: Նրանք թերեւս դրանով էլ խրախուսում են չարագործ հրոսակին: Ինչո՞ւ, այն պարզ պատճառով, որ Ռուսաստանի նախագահի հովանավորությամբ կազմակերպված բանակցային ամեն հանդիպումից հետո Ադրբեջանի իրականացրած սադրիչ գործողությունը ուղղված է լինում Հայաստանի նախագահի մասնակցությամբ անցկացված բանակցային հանդիպման ռուսական նախաձեռնության դեմ: Այսինքն՝ խնդիրը ադրբեջանցի մարդասպան հրոսակի նկատմամբ ամերիկացիների կամ ֆրանսիացիների համակրանքը չէ, այլ ադրբեջանական սադրանքներով ռուսական նախաձեռնության չեզոքացումը:

Հասկանալի է, որ ադրբեջանցիներին սադրանքի համար չի դատապարտում նաեւ Ռուսաստանը: Նա էլ ռուսական երբեմնի գերազդեցությունը վերականգնելու հաշվարկներով խուսափում է, որ ադրբեջանցի հրոսակին ինքնակամ չմղի ԱՄՆ-ի կամ ԵՄ-ի գիրկը, ոչ էլ Թուրքիա: Ավելին, Ռուսաստանը ամեն կերպ փորձում է Ադրբեջանին հակադրել Թուրքիայի դեմ, ընդ որում՝ հենց Հայաստանի միջոցով: Ըստ երեւույթին, այս տեսանկյունից պետք է մոտենալ Հայաստան-Թուրքիա նորմալացման գործընթացի նկատմամբ նրա ընդգծված դրական դիրքորոշմանը:

Չի բացառվում, որ Կազանում նախատեսվող հանդիպումը հանգեցնի նույն արդյունքի, ինչ նախորդներն էին: Այդ դեպքում Մինսկի խմբի երկրները պատեհ առիթը բաց թողնելու համար նորից ափսոսանք կհայտնեն, իսկ ադրբեջանցի մարդասպանը նոր չարագործություններով վերստին սադրանքի կդիմի եւ նորից կապավինի ԱՄՆ-ի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի ներողամտությանը: Հետեւաբար պետք է մտածել հրոսակին ինքնուրույն պատժելու մասին:

Կան ժողովուրդներ, որոնք առանց պատժվելու չեն գիտակցում իրենց չարագործությունը: Քանի որ ադրբեջանցին բորենիների ոհմակ է, ուստի նա առավել եւս չի այդ գիտակցի: Թեեւ ղարաբաղյան պատերազմում մենք խուզել ենք այդ բորենիների պոչը, սակայն Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում խոշտանգված մեր քույրերի, եղբայրների վրեժը դեռեւս չենք լուծել: Գոնե պետք է լուծել սպանված յուրաքանչյուր հայ զինվորի վրեժն ըստ արժանվույն, այլապես մարդասպան հրոսակը էլ ավելի կլկսվի:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, Ֆրանսիային եւ Ռուսաստանին, ապա հիշեցնենք, որ հայկական հարցի պատմությունը հայ ժողովրդի նկատմամբ արեւմտյան մեծ տերությունների որդեգրած չարանենգ քաղաքականության պատմությունն է նաեւ: Անսկզբունքայնությունն ու երկերեսանիությունը միշտ եղել են այս տերությունների բնորոշ հատկանիշը: Հետեւաբար նրանք հայ զինվորի սպանությունը առանց երկմտելու այնքան կհանդուրժեն, որքան հանդուրժելով խրախուսում են ադրբեջանցի մարդասպանի չարագործությունը:

# Կարսում Սբ Առաքելոց եկեղեցին վերածվել է մզկիթի, Եղիշե Չարենցի տունն էլ դարձել աղբանոց


Կարսի Սբ Առաքելոց եկեղեցին

«Բարի գալուստ Թուրքիայի Հանրապետություն»` վրաց-թուրքական սահմանին ասաց երիտասարդ թուրք սահմանապահը: Արտահայտությունը չափազանց խորթ էր հայ զբոսաշրջիկների մեր խմբի համար, որ ավելի քան 12 ժամ ճանապարհ էր կտրել` այցելելու ոչ թե Թուրքիա, այլ` ուխտագնացություն կատարելու Պատմական Հայաստան:

Մեզանից յուրաքանչյուրը հոգու խորքում գիտակցում էր, որ հայրենիքից հայրենիք անցնելու համար չորս սահման է անցել ու Հայաստանից Հայաստան այցելելու համար անցագիր ձեռք բերել, սակայն դաժան իրականությունը խոստովանելը չափազանց դժվար էր:

Ավտոբուսում լռություն էր: Այդ լռությունը «խաթարում» էր Ֆլորա Մարտիրոսյանի «Դլե յամանը»: Յուրաքանչյուրն այդ պահին ինքն իր հետ, իր անցյալի, հիշողությունների ու նախնիների: Լռությունը խախտեց ամերիկահայ **Թալինը**` բարձրաձայն ասելով այն, ինչ բոլորն էին զգում:


Կարսում պահպանված հայկական քարաշեն շենքերից

«Միեւնույնն է, ես ինձ Թուրքիայում չեմ զգում: Ես ինձ զգում եմ իմ հայրենիքում: Սա հայկական հող է, հայրենի բնություն, հող ու ջուր»: Սա կարծես ուշացած պատասխան էր թուրք սահմանապահի խոսքին: Պատասխանն այդ, ցավոք, միայն զգացական էր. իրականությունը բոլորովին այլ էր:

Առաջին քաղաքը, որ դիմավորում է զբոսաշրջիկին, Կարսն է: Պատմական Հայաստանի 12 մայրաքաղաքներից մեկը` Կարսը թեպետ բնակեցված է քրդերով եւ թուրքերով, սակայն կարելի է զգալ հազարավոր անմեղ նահատակների շունչն ու հոգին, որ սավառնում է օդում եւ պահանջում արդարություն ու արժանի պատիժ եղեռնագործներին:

Առաջինը, որ գրավում է զբոսաշրջիկների ուշադրությունը, հայկական երկհարկանի սրբատաշ քարերով տներն են, որոնք բարձրահարկ գունավոր ժամանակակից շենքերի կողքին առանձնանում են իրենց ինքնատիպությամբ եւ ճարտարապետական լուծումներով: Թուրքերին երկար ժամանակ հարկավոր չէր գիտակցելու, որ հայկական հողերը զավթելուց եւ հայերին սպանելուց հետո հարկավոր է հայկական շենքերը պահպանել. դա միակ ճանապարհն է` աշխարհին ներկայանալու որպես զարգացած «ազգ»:

Աշխարհին որպես քաղաքակիրթ ազգ ներկայանալու համար թուրքերն ընտրել են ամենահեշտ ճանապարհը. Կարսի փողոցներում պահպանված հայկական քարաշեն տները, որոնց կարելի է հանդիպել նաեւ Գյումրիի հին թաղամասում, ներկայացվում են որպես «թուրքական ճարտարապետության գոհարներ» եւ ընդգրկված են հուշարձանների պահպանման ցանկում: Հայկական սեւ քարից կառուցված գրեթե բոլոր շենքերի վրա ծածանվում են թուրքական դրոշներ:

Օրինակ, հայկական ճարտարապետության առանձնահատուկ շենքն այժմ գործում է իբրեւ թանգարան: Շենքի դիմաց Աթաթուրքի արձանն է, կողքին` թուրքական դրոշը: Վահանակի վրա գրված է. «Կառույցը 18-րդ դարի թուրքական ճարտարապետության զարդերից է»:

Չկա առավել սարսափելի տեսարան հայ քրիստոնյայի համար, երբ նախնիների հողում տեսնում է, թե ինչպես են հայկական եկեղեցիները կա՛մ հիմնահատակ ավերվել, կա՛մ վերածվել մզկիթների:

Կարսի Սբ Առաքելոց եկեղեցում այսօր շարականներ չեն հնչում, պատարագ չի մատուցվում: Գմբեթի խաչը հանված է, խորանը` քանդված, հատակին փռած թուրքական գորգերն էլ հուշում են` եկեղեցին վերածվել է մզկիթի: Քրիստոնեության հանդեպ ատելությունն այնքան մեծ է եղել, հավատքի մոգական ուժի վախը` հսկայական, որ Սբ Առաքելոցը վերածելով մզկիթի` թուրքերը եկեղեցու հարեւանությամբ մի քանի մզկիթ էլ են կառուցել` փորձելով այդ կերպ թաղել քրիստոնեությունը, չհասկանալով, որ պատմությունը չի մոռացվում, հավատքը չի անէանում եւ Սբ Առաքելոցը կհամարվի եկեղեցի, քանի դեռ հայը ապրում է:

Եկեղեցի ստիպված էինք մտնել մուսուլմանական օրենքներով: Քուրդ մոլլան մեզ ստիպեց դռան շեմին կոշիկները հանել: Նա գիտակցում էր, որ այցելուները տարածքի տերերն են` հայերը, եւ խեթ, բռնվող գողի հայացքով էր նայում: Նրա դեմքը բարկություն ու միաժամանակ զարմանք էր արտահայտում, երբ հայերը գրեթե արտասվելով աղոթում էին, շարական երգում եւ խաչակնքում:

Եկեղեցու հարեւանությամբ է գտնվում Կարսի բերդը. գագաթին ծածանվում է թուրքական կարմիր դրոշը` աստղն ու կիսալուսինը:

Սբ Առաքելոցի հարեւանությամբ է գտնվում Սուրբ Վարդանի կամուրջը: Կամուրջը շրջապատված է հայկական բաղնիքներով, որոնք հրաշալի պահպանվել են: Հարեւանությամբ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի բնակարանն է: Երկհարկանի կառույցից այսօր միայն պատերն են մնացել: Տարածքը չի խնամվում եւ վերածված է աղբանոցի: Երկաթներով ամրացված մեկ այլ կամուրջ էլ կարսեցիները դեռեւս մեկ դար առաջ անվանել են Չարենցի կամուրջ: Կարսեցիների հիշողության մեջ դրոշմվել է, թե ինչպես էր Չարենցն ամեն օր կամուրջն անցնում` դպրոց գնալու համար: Ռուսական գիմնազիայի շենքը, ուր սովորել է Չարենցը, 19-րդ դարի ճարտարապետության դիմագիծ ու առանձնահատկություն ունի: Շենքն այսօր հիվանդանոց է եւ նորոգման փուլում է: Կառույցի դիմաց տեղադրված վահանակը պատմում է. կառույցը նախկինում էլ գործել է որպես հիվանդանոց` եւ թուրքական կառավարությունը, գիտակցելով շենքի կարեւորությունն ու ճարտարապետական արժեքը, գումար է հատկացրել պահպանելու համար: Թե ինչու է շենքն այդչափ կարեւոր եւ թուրքական ճարտարապետական որ շրջանին է վերաբերում, թուրքերը լռում են: Լռում են, որովհետեւ ասելիք չունեն:


Տունը, որտեղ ծնվել է Եղիշե Չարենցը

Կարսի հենց կենտրոնում է թանգարանը: Թուրքիայի տուրիզմի եւ մշակույթի նախարարության աջակցությամբ գործող թանգարանը ներկայացնում է «Թուրքիայի անցյալը»: Այստեղ այցելուն կարող է գտնել հայկական զարդեր, սափորներ, կարասներ, մետաղադրամներ, հայկական գորգեր ու տարազ: Թանգարանի վահանակը տեղեկացնում է, որ տարածքում ապրել են ոչ միայն թուրքեր, այլեւ հույներ, քրդեր, ռուսներ: Հայի գոյության մասին գրված ոչինչ չկա, սակայն ցուցանմուշները հայի ներկայության լավագույն ապացույցն են:


Կարսի թանգարանը, հայկական գորգեր

Թուրքերը ջնջել են հայի ներկայությունը նրա սեփական երկրից, սակայն թանգարանում որպես քանդակագործության լավագույն տարր ներկայացրել են հայ վարպետների կերտած Սբ Առաքելոց եկեղեցու զարդաքանդակներով ու նախշերով դռները:

Դրանք հենց առաջին հայացքից գրավում են այցելուին իրենց գեղեցկությամբ, զարդանախշերի ինքնատիպությամբ: Թանգարանի բակում, ի թիվս բազմաթիվ այլ քանդակների, ներկայացված են հայկական գերեզմանաքարեր, խաչքարեր: Առավել ուշադիրները կարող են գերեզմանաքարերի վրա ոչ միայն հայկական խաչեր տեսնել, այլեւ հայատառ արձանագրություններ:

Մեր հարցից` «Մի՞թե այս տարածքում դարեր շարունակ հայեր չեն ապրել», թանգարանի աշխատակիցը նախ այլայլվեց, հետո ասաց. «Գուցե նաեւ ապրել են, չեմ բացառում»: «Այդ դեպքում ինչո՞ւ չեք տեղեկացնում, որ այստեղ նաեւ հայեր են ապրել». աշխատակիցն ասաց. «Խաչը տեղադրել ենք, չէ՞, գմբեթին»: Քուրդ երիտասարդը նկատի ուներ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին:

Թանգարանի բակի հետնամասում պահպանված վագոնը ճակատագրական նշանակություն ունի հայերի համար: Հենց այստեղ են 1921թ. կնքվել հայ ժողովրդի ճակատագիրն ու ներկայիս սահմանները:

Կարսում հայկական որեւէ այլ հետք չգտանք: Մնացյալը մզկիթներ են, դիմագիծ չունեցող շենքեր ու հյուրանոցներ, որոնք խորթ էին եւ որեւէ կապ չունեին հայ քրիստոնյայի հետ, ով հայոց երբեմնի հզոր մայրաքաղաքում փնտրում է նախնիների անցյալն ու պատմությունը: Առջեւում մեզ սպասում էր Անին...

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կարս-Երեւան

**Հ. Գ. Կարսի կենտրոնում է գտնվում եվրոպական ոճով կառուցված «Ղարաբաղ» հյուրանոցը: Հյուրանոցի տերը ազգությամբ քուրդ է: «Ղարաբաղը թուրքակա՞ն տարածք է», հարցրեցի քուրդ երիտասարդին: «Այո՛, Ղարաբաղը հին թուրքական տարածք է»: «Իսկ որտե՞ղ է գտնվում, շատ եմ ուզում այցելել Ղարաբաղ» հարցի պատասխանն առավել զավեշտալի էր: Քուրդ երիտասարդը շփոթված ասաց. «Անկեղծ ասած, ես չգիտեմ, թե որտեղ է գտնվում, սակայն Ղարաբաղը թուրքական հող է»:**

**Արեւմտյան Հայաստան այցելությանն աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում «Անի տուր» տուրիստական գործակալությանը:**



Այս վագոնում է 1921 թ. կնքվել Կարսի պայմանագիրը:

# Նամակ-բողոք ընդդեմ «Նյու Յորք թայմսի» կողմնապահության

***Ի նշան բողոքի «Նյու Յորք թայմս» թերթի մայիսի 31-ի համարում տպագրված լրագրող Էլեն Բարրիի «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սառեցված հակամարտությունը սկսում է եռալ» հոդվածի (տե՛ս «Ազգ»-ի հունիսի 8-ի համարը), «Նյու Յորք թայմսի» խմբագրին են հասցեագրվել նամակներ, որոնցից մեկը՝ գրված ճանաչված մտավորական եւ Ամերիկայի Հայ իրավունքների խորհրդի նախագահ Երվանդ Ազատյանի կողմից, թարգմանաբար («Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթից) ներկայացնում ենք ստորեւ:***

«Նյու Յորք թայմսը» հավաստի լրագրության ասպարեզում սովորաբար օրինակելի պարբերական է, եւ այդ հատկությունը նախատեսում է, որ թերթը պահպանի մշտապես իր հեղինակության եւ անաչառ լրագրության չափանիշները:

Ձեր մայիսի 31-ի համարում տպագրված Էլեն Բարրիի հոդվածը արժի ծառայություն է մատուցում ինչպես ձեր ընթերցողներին, այնպես էլ ընդհանրապես մարդկանց:

«Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սառեցված հակամարտությունը սկսում է եռալ» խորագրի ներքո հոդվածագիրը ներկայացնում է Ադրբեջանում տիրող ռազմատենչ տրամադրությունները, ամբողջովին համաձայնելով ազերիների տեսակետներին եւ արտահայտություններին:

Մեզ չենք վերապահում պարտականությունը որեւէ լրագրողի հիշեցնելու, թե ինչ ձեւով պետք է արծարծի այս կամ այն թեման: Էլեն Բարրին, սակայն, իրեն թույլ է տվել քողարկելու ճշմարտությունն առանց խորամուխ լինելու պատմության մեջ: Նա գրում է. «1990-ականների սկզբներից Ադրբեջանը փորձում է ձեռք բերել վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի՝ իր սահմաններում գտնվող հայկական մի անկլավի նկատմամբ, որի բնակչության գերակշռող մասը հայեր են, եւ ապահովել վերադարձը այն ազերիների, որոնք պատերազմի պատճառով ստիպված էին հեռանալ իրենց տներից»:

Այս նախադասության մեջ մեկից ավելի կեղծարարություն կա: Ինչո՞ւ պետք է «Նյու Յորք թայմսի» հոդվածագիրը հոժարակամ հաստատի ազերի կառավարության այն հանգերգը, որ Ղարաբաղը Ադրբեջանի սահմաններում է գտնվում, երբ նույնիսկ ստալինյան ամենադաժան ժամանակաշրջանում ուներ հատուկ կարգավիճակ որպես ինքնավար մարզ, նման Նախիջեւանի անկլավի, որն ինքնավար հանրապետություն էր: Երկուսն էլ ազերի իշխանությանն էր հանձնվել Ստալինի խորամանկ քայլի հետեւանքով: Խորհրդային ժամանակաշրջանում Նախիջեւանի բնակչության 60 տոկոսը հայեր էին, բայց տարածքը զրկվեց իր բնակչությունից ՊԱԿ-ի գնդապետ եւ քաղբյուրոյի անդամ Հեյդար Ալիեւի «եղբայրական» թողտվությամբ: Նա հետագայում դարձավ Ադրբեջանի առաջնորդը, եւ նրան էլ այդ «ժողովրդավարական» երկրում փոխարինելու եկավ որդին՝ Իլհամը:

Ձեր թղթակիցը մանրամասն ներկայացնում է Ադրբեջանի փախստականների խնդիրը, նշելով բավականին սրտաճմլիկ պարագաներ, որոնք պատմական կոնտեքստից դուրս չափազանց հուզիչ երանգ են ձեռք բերում:

Նախ նշեմ, որ փախստականների խնդիրը հետեւանքն էր այն պատերազմի, որ Ադրբեջանի կառավարությունն ինքը սանձազերծեց հայերի դեմ Ղարաբաղում: Երկրորդ, մինչ ալիեւյան դինաստիան եւ իր մանկլավիկները քաղում են երկրի նավթային պաշարների հարստությունը, իրենց թույլ տալով ապրել լյուքսի ճոխության պայմաններում (Դուբայում եւ Փարիզում առանձնատներ եւ այլն), նրանք փախստականներին օգտագործում են որպես քաղաքական «հաղթաթուղթ»՝ ցույց տալու միջազգային հանրությանը, թե ինչքան դաժան է Հայաստանը: Այնպես է թվում, կարծես ձեր լրագրողի սիրտն արյուն էր լալիս ազերի փախստականների մասին գրելիս:

Հետեւյալ տողերը սոսկ միակողմանի են ներկայացնում փախստականների խնդիրը. «Բաքվի դժգոհություններին զարկ տվողը փախստականներն են, որոնք մոտ 20 տարի անորոշ վիճակում են: Ըստ ՄԱԿ-ի տվյալների, նրանց թիվը 586.013 է, այսինքն՝ բնակչության 7 տոկոսը, որը տեղահանվածների ամենաբարձր ցուցանիշն է աշխարհում, ըստ «Տեղահանվածների միջազգային մոնիտորինգ կենտրոնի» տվյալների:

Ձեր հոդվածագրին պետք է ողջունել, որ հուսալի աղբյուրների է դիմում իրազեկ դառնալու համար, բայց ինչո՞ւ նա չի վարվում նույն ձեւով՝ ներկայացնելու համար այն, ինչ պատահեց հայ փախստականների հետ Սումգայիթում եւ Բաքվում 1988 եւ 1990 թվերին, երբ ազերի կառավարությունը կոտորածներ սանձազերծեց նրանց դեմ:

Խորհրդային իշխանության օրոք հայերի 450 հազարի հասնող մի հոծ համայնք էր ապրում Ադրբեջանում: Նրանց կամ սպանեցին, կամ էլ տեղահանեցին: Իսկ նրանք, ովքեր հավասացած էին, որ Հայաստանում ապահով մի անկյուն են գտել, զոհվեցին 1988-ի երկրաշարժի ժամանակ: Ձեզ եմ թողնում հաշվարկելը, թե 450 հազար հայ փախստականները երեք միլիոն բնակչության քանի տոկոսն են կազմում:

Եվ վերջապես ոչ պակաս կարեւոր է նաեւ հետեւյալը: Տիկին Բարրին գրում է. «Ադրբեջանը, որը շատ ավելի հարուստ է, 2003 թվականից ի վեր 20 անգամ մեծացրել է իր պաշտպանական ծախսերը, ըստ Միջազգային ճգնաժամային խմբի տվյալների»:

Փոխանակ նավթային դոլարները նոր պատերազմ սանձազերծելու նպատակին ծառայեցնելու՝ ազերի կառավարությունը կարող է դրանցով լուծել իր փախստականների խնդիրը, որն իր պատճառով է առաջացել: Նաեւ կարող է փոխհատուցել հայ փախստականներին, որոնք իրենց ունեցվածքները թողեցին Ադրբեջանում:

Մարդկության խղճին ու զգացմունքներին դիպչելով, ձեր հոդվածագիրը կրակին յուղ է ավելացնում՝ խրախուսելով նոր պատերազմ սանձազերծելու ազերիների նկրտումները:

Մինչդեռ հավասարակշռված եւ ամբողջական պատկերը ներկայացնող մի հոդված կարող էր նպաստել կարգավորելու այս կնճռոտ թնջուկը եւ միաժամանակ հավատարիմ մնալ արդարացի ու անաչառ լրագրության սկզբունքներին»:

**Երկրորդ նամակը «Նյու Յորք թայմսի» խմբագրին է ուղղել Կալիֆոռնիայից Ռոուզ Նեմես Դեյվիսը, որն «աղաղակող անճշտություններով լի» է որակել երկու անգամ Պուլիցերյան մրցանակի արժանացած լրագրողուհու հոդվածը:**

**«Զրպարտչական հոդվածը ամբողջովին ոչ պրոֆեսիոնալիստական կողմնապահության տիպիկ օրինակ է, կոռումպացված լրագրության նմուշ: Եթե տպագրված լիներ աննշան մի թերթում, գուցե անտեսեի, բայց «Նյու Յորք թայմսում» տպագրվելու պարագայում մենք՝ որպես հասարակության անդամներ, չենք կարող անտեսել: Նման հոդվածները վտանգավոր են եւ դեպի պատերազմ են առաջնորդում: «Նյու Յորք թայմսը» պետք է հերքում տպագրի եւ Էլեն Բարրին էլ բացատրի, որ նման գրելաոճը հարիր չէ Պուլիցերյան մրցանակի արժանացած հոդվածագրին»:**

Թարգմ. Հ.Ծ.

# Ամերիկյան հածանավ Բաթումի նավահանգստում

*Մտահոգություն Ռուսաստանում*



**ՌԴ արտգործնախարարությունը մտահոգություն է արտահայտել այն կապակցությամբ, որ ամերիկյան «Մոնտերեյ» հածանավը «ցուցադրաբար» մուտք է գործել Բաթումի նավահանգիստ: Գերատեսչության կայքում հրապարակվել է համապատասխան պաշտոնական հայտարարություն:**

**Այնտեղ նշվում է, որ սա ամերիկյան ռազմանավերի Վրաստան այցելելու առաջին դեպքը չէ. 2011-ի հունիսի 9-ին Բաթումի նավահանգիստ էր մտել «Անցիո» հրթիռային հածանավը:**

**ՌԴ ԱԳՆ-ում նշում են, որ նման մանեւրները ներհակ են ռուս-ամերիկյան հարաբերությունների ներկայիս բնույթին: Մասնավորապես մտահոգիչ է, որ հակահրթիռային պաշտպանության ոլորտում ռուս-ամերիկյան համագործակցության մասին խոսելը ԱՄՆ-ին չի խանգարում «փաստորեն օպերատիվ հակահրթիռային հետախուզություն» անցկացնել Ռուսաստանի սահմանների անմիջական մոտակայքում:**

**«Մոնտերեյ» հածանավը դառնալու է Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի մի մասը: Նավի «Իջիս» համակարգը թույլ է տալիս 190 կմ շառավղով հետեւել միաժամանակ 100 թիրախների: 2011-ի մարտին Միջերկրական ծով ուղարկված «Մոնտերեյ» հածանավը հունիսին մտել էր Սեւ ծով:**

ԼՐԱՀՈՍ

# Բան Կի Մունը վերընտրվեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար



**ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը Բան Կի Մունի թեկնածությունը երկրորդ ժամկետով հաստատել է կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնում: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ այդ պաշտոնի համար ուրիշ թեկնածություն չէր առաջադրվել:**

**Այսպիսով, 67-ամյա Բան Կի Մունը պարզապես չէր կարող չվերընտրվել: Նա կշարունակի ՄԱԿ-ը գլխավորել մինչեւ 2016 թ. դեկտեմբերի 31-ը:**

**Բան Կի Մունի թեկնածությունը պաշտպանելու որոշում էր ընդունվել ՄԱԿ-ի ԱԽ հունիսի 17-ի նիստում: Նիստի արդյունքների հիման վրա ընդունված բանաձեւում ԱԽ-ն հանձնարարում էր վերընտրել գործող գլխավոր քարտուղարին:**

**Ավելի վաղ Բան Կի Մունի վերընտրությանը պաշտոնապես հավանություն էին տվել ԱԽ մշտական անդամները՝ ԱՄՆ-ը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը:**

**Ինքը՝ Բան Կի Մունը վերընտրվելու մտադրություն էր արտահայտել 2011-ի ապրիլին: Հարավկորեացի դիվանագետը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնն զբաղեցնում է 2007-ի հունվարի 1-ից: Կազմակերպության կանոնադրությունը տվյալ պաշտոնում միեւնույն անձի վերընտրության սահմանափակումներ չի նախատեսում:**

# Բանակի եւ «Ալ Ղաիդայի» կատաղի մարտեր Եմենում

**Եմենի հարավում՝ Զինջիբար քաղաքում վերջին երկու օրերին կատաղի մարտեր են ծավալվել բանակային ստորաբաժանումների եւ «Ալ Ղաիդա» ահաբեկչական ցանցի գրոհայինների միջեւ: Ավելի վաղ իսլամիստ ահաբեկիչները գրավել էին այդ քաղաքը:**

**Երկրի ռազմական աղբյուրներ վկայակոչելով՝ newsru.co.il կայքը հաղորդում է, որ Զինջիբարում մարտերի ընթացքում սպանվել է առնվազն 100 զինվոր, 260-ը վիրավորվել են:**

**Ըստ պաշտոնական տվյալների, վերջին երկու օրերին սպանվել են 22 եւ վիրավորվել մի քանի տասնյակ ահաբեկիչներ: Զինջիբարի համար մարտերը շարունակվում են: Տեղաբնակներն ասում են, որ քաղաքում եւ շրջակա գյուղերում գործում են «Ալ Ղաիդայի» հարյուրավոր զինված կողմնակիցներ:**

**Զինվորականները նշում են «Ալ Ղաիդայի» գրոհայինների պատրաստման բարձր որակը: Գրոհայինների մեջ շատ են օտարերկրացիները, մասնավորապես՝ արաբական տարբեր երկրներից եկածները:**

**Որոշ տեղեկությունների համաձայն, մոտ օրերս Եմեն է վերադառնալու նախագահ Ալի Աբդալլահ Սալեհը, որը հրետանային արկի պայթյունից վիրավորվելուց հետո բուժվում է Սաուդյան Արաբիայում:**

# Աֆղանստանից դուրս կբերվի 30 հազար ամերիկացի զինծառայող

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հունիսի 22-ին հայտարարել է Աֆղանստանից 30 հազար զինծառայող դուրս բերելու ծրագրերի մասին: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է այս ծրագրերի որոշ մանրամասնություններ:**

**Այսպես, 2011-ի հուլիսին Աֆղանստանից դուրս կբերվի 5 հազար ամերիկացի զինծառայող: Մինչեւ տարեվերջ տարածաշրջանից կհեռանա եւս 5 հազար զինծառայող, իսկ մնացյալ 20 հազարը դուրս կբերվի 2012-ին:**

**Փաստորեն մեկուկես տարում Աֆղանստանից կհեռանան 2009-ին Օբամայի այնտեղ ուղարկած լրացուցիչ զորաբաժնի բոլոր զինծառայողները: Այս կապակցությամբ Օբաման վերջնական որոշում էր ընդունել հունիսի 21-ին:**

**Մեկնաբանները զորքերի դուրսբերման պատճառների թվում առանձնացնում են «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի սպանությունը եւ 2012-ին կայանալիք ԱՄՆ նախագահական ընտրությունները: Դեմոկրատ Օբամայի մրցակից հանրապետականները պահանջում են զորքը դուրս բերել Աֆղանստանից:**

**Զորքի դուրսբերման կողմնակից է նաեւ պաշտպանության նորանշանակ նախարար Լեոն Պանետտան, որն իր պաշտոնը ստանձնելու է հուլիսի 1-ին:**

**Ներկայումս Աֆղանստանի տարածքում միջազգային ուժերի թվակազմը 100 հազարից ավելի է (մեծ մասը կազմում են ամերիկացիները): ՆԱՏՕ-ի հրապարակած նպատակն է մինչեւ 2014 թ. լիովին կայունացնել երկրի իրադրությունը եւ ապա անվտանգության վերահսկողության գործը վստահել տեղական իրավապահ մարմիններին:**

# Ձերբակալվել է «Լա Ֆամիլիա» թմրակարտելի պարագլուխը

Մեքսիկայի ոստիկանությունը ձերբակալել է երկրի խոշորագույն թմրակարտելներից մեկի՝ «Լա Ֆամիլիայի» պարագլուխ Խոսե դե Խեսուս Մենդեսին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ ձերբակալությունը կատարվել է Ագուասկալիենտես քաղաքի մոտակայքում՝ առանց հրազենի գործադրման:

Երկրի նախագահ Ֆելիպե Կալդերոնը ոստիկանությանը շնորհավորել է այդ հաջողության առիթով: Նախագահը թմրակարտելների դեմ մղվող պայքարը համարում է իր գլխավոր խնդիրներից մեկը:

«Լա Ֆամիլիան» Մեքսիկայի 7 խոշորագույն թմրակարտելներից մեկն է: Արտադրում է սինթետիկ թմրանյութեր, որոնք առաքվում են ԱՄՆ: Կարտելը ստեղծվել է 2006-ին: «Լա Ֆամիլիայի» նախկին պարագլուխ Նասարիո Մորենոն 2010-ին սպանվել էր ոստիկանության հետ փոխհրաձգության ժամանակ: Նա իր զինակիցներին կարգադրել էր չօգտագործել թմրադեղեր եւ դրանք չտարածել Մեքսիկայում: Կազմակերպության կենտրոնը Միչոականի նահանգում էր:

Մեքսիկայում Կալդերոնի նախագահության տարիներին (2006-ից մինչեւ օրս) թմրակարտելների հակամարտությունների հետեւանքով ավելի քան 37 հազար մարդ է սպանվել:

# «ԳՈՀԱՐԸ» դարձյալ հիացրեց

## Ուրախության արցունքներ

Երջանկության արցունքներ: Ափսոս կարճ են տեւում՝ մի քանի րոպե:

Իսկ ես, անցած կիրակի, դիտելով Հ-1-ը, 3 ժամ արտասվել եմ (հավատացած եմ ոչ միայն ես):

Դեռ չէինք մարսել մայիսի 28-ին Հանրապետության հրապարակի «Գոհարի» անգերազանցելի համերգը, հիմա էլ նոր, ավելի ցնցող համերգ՝ Հալեպից:

Չէ՝ դա սովորական համերգ չէր: Դա հայրենասիրության, ազգի մեծարման գովերգություն էր: Դա բարձրարվեստ, նմանը չունեցող մի ինքնախոստովանանք էր: Դա ազգագրական երգերի եւ պարերի մի մեծ տարափ էր, որին չէին կարող դիմադրել հուզմունքն ու արցունքները:

Չեմ թաքցնում, իմ ապրած երկար տարիների ընթացքում երբեք նման ապրումներ չեմ ունեցել, էլ չեմ խոսում հպարտության մասին:

Հեռուստաէկրանից մեզ գերում էր կարծես այլ մոլորակից իջած մի տեսիլք իր հոյակապ սիմֆոնիկով, համեմված մեր ազգային գործիքներով եւ իր հեքիաթային դիրիժորով: Իր նմանը չունեցող, քառաձայն երգչախմբով, իր պարողներով, որոնք ասես ոչ թե պարում էին, այլ լողում. իսկ զրնգուն բարիտոնները եւ տենորները, սոխակամանման քնքուշ ձայնով եւ արտաքինով մեզ համար իրոք անծանոթ աղջիկների երգերը ուղղակի պայթեցրին: Իսկ ինչպիսի՜ գործիքավորում: Ամենուր բարձր ճաշակ եւ անթերի մատուցում: Իսկ խորհուրդը եւ փառապանծ երգերը մի քանի ակնթարթ հետո մեզ հրեշտակների մոտից տեղափոխեցին հերոսների մոտ: Եվ հիշեցնում էին մեզ, թե ովքեր ենք եւ ուր ենք գնում...

Նման պահեր մենք ապրել ենք նաեւ 1988-ին, մեր ազգային զարթոնքի օրերին, երբ ամբողջ ժողովուրդը բռնցքվել էր, միմյանց նկատմամբ սիրով լցվել եւ բարեկամացել: Այդ օրերին էր, որ կյանքի կոչվեց մի նոր կարգախոս՝ «ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ»: Եվ այդ կարծես մոռացված կարգախոսը «Գոհարը» նորից վերադարձրեց մեզ (դե արի, ու մի արտասվի): Շատ երջանիկ կլինեի, որ «Գոհարի» պարգեւները բոլորին հասնեն. կուզեի, որ «Գոհարին» բոլորը ճանաչեն, որ նա մտնի ամեն մի տուն եւ օջախ, որ բոլոր հայերը բարեկամանան եւ հավասար ապրեն:

ԵՎ սիրենք զմիմեանս:

«Գոհարը» մեզ սեր է բաժանում, պետք է դրանից օգտվեն բոլորը: Դրա համար պետք է, որ «Գոհարը» չլինի միայն Հ-1-ի մենաշնորհը: Պետք է մեր մնացած հեռուստակայանները իրենց դռները լայն բացեն «Գոհարի» առաջ, եւ ոչ միայն նրա ամբողջական համերգները եթեր արձակեն, այլ նաեւ նրա համերգացանկի առանձին համարներ պետք է լինեն մեր բոլոր հեռուստակայանների ամենօրյա ծրագրերի ցանկալի եւ սպասված հաղորդումները:

Եվ վերջապես, իշխանությունները պետք է իրենց խոսքն ասեն: Նրանք էլ իրենց հերթին պետք է մեծարեն եւ գնահատեն «Գոհարին»: Պետք է ստեղծեն հնարավորություն, որ «Գոհարը» շրջի ամբողջ աշխարհով մեկ եւ նա կնվաճի աշխարհը ու կբարձրացնի հայի հեղինակությունը: Նա կդառնա մեր ազգի դեսպանը ամբողջ աշխարհում:



Իսկ դրա համար նախ մենք պետք է ճանաչենք «Գոհարին»: Մինչեւ օրս մենք նրա մասին գրեթե ոչինչ չգիտենք: Նախ պետք է իմանանք, թե ով է Գոհարը, ովքեր են այդ շնորհալի անսամբլի ղեկավարները, բեմադրության եւ ձայնային ռեժիսորները, նվագողները, երգողներն ու պարողները:

Դեսից-դենից ենք որոշ բաներ իմանում (ասում են՝ «Գոհարի» անդամների հիմնական կորիզը երաժշտասեր գյումրեցիներն են):

Ասում են, չգիտեմ: Բայց գիտեմ, որ միայն Գյումրին կարող է նման տաղանդներ ծնել: Չէ, «Գոհարը» այլ մոլորակային չէ, նա բազմաթիվ զրկանքներ կրած, մոխիրների միջից հարություն առած, աշխարհով մեկ սփռված մեր հերոսական ժողովրդի զավակն է:

Վերջում, ուրախության արցունքների մեջ ցանկանում եմ նշել նաեւ տխրության արցունքների մասին: Այո, շատ եմ ցավում, որ մեր վերջին 20 տարվա սերունդը մեծացել է «օրը կգնա, ժամը կգնա» մղկտոցի, արմանների եւ արմենչիկների կլկլոցի տակ, սակայն այսօր եկեք չխոսենք մեր անշքացած մշակույթի մասին, այդ մասին ես շատ եմ գրել (միայն **«Ազգում»**՝ 5-6 անգամ): Վերադառնալով «Գոհարին», պետք է անպայման ընդգծել, որ նա բոլորին ցույց տվեց, թե որտեղ, ում վրա եւ ինչպես կարելի է ծախսել միլիոնները:

Բարի երթ «ԳՈՀԱՐԻՆ»:

ԿԱՌԼԵՆ ՔԱԼԱՇՅԱՆ



# Կայացավ Արմեն Դարյանի «Նամականի» գրքի շնորհանդեսը



**Երեկ Խնկո-Ապոր ազգային մանկական գրադարանում կայացավ սփյուռքահայ գրականության եւ ընդհանրաբար՝ հայ գրականության նորագույն շրջանի ականավոր դեմքերից մեկի՝ Արմեն Դարյանի «Նամականի» գրքի շնորհանդեսը, կազմակերպված Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հետ: Գրքում զետեղված են սփյուռքահայ անվանի գրող, թարգմանիչ, խմբագիր Արմեն Դարյանի ուղարկած եւ ստացած նամակների ընտրանին, որը հրատարակել է գրականության եւ արվեստի թանգարանը՝ խմբագրությամբ գրականագետ Հենրիկ Բախչինյանի: 1995-ին գրողի այրին՝ Արսինե Դարյանը թանգարանին է հանձնել ամուսնու արխիվը (230 նյութ), որի հիման վրա թանգարանում բացվել է Արմեն Դարյանի անհատական ֆոնդը: Իսկ 2009-ին կրկին թանգարանի ֆոնդը հարստացավ գրողի այրու կողմից հանձնված ամուսնու 400-ից ավելի նամակներով:**

**Միջոցառումը հետաքրքրական նկարագրականով բացեց ու վարեց օրվա բանախոս, գրադարանի փոխտնօրեն Մաղլեն Հովսեփյանը, նշելով. «Արմեն Դարյանը, նույն ինքը՝ Ալֆոնս Ադդարյան, իրավամբ համարվում է սփյուռքահայ գրականության նորագույն շրջանի ականավոր դեմքերից մեկը, տաղանդավոր բանաստեղծ Գառնիկ Ադդարյանի, նույնքան տաղանդավոր արձակագիր եղբայրն է: Նրա հեղինակած երկերը՝ «Մեր հացը», «Կարոտ եւ կեանք», «Խարիսխէն հեռու», «Խարիսխին մօտ», «Լեռը եւ տունը», «Երկու եղանակ», «Նախագահին կոչիկները» լույս են տեսել Բեյրութում եւ Երեւանում»:**

**Միջոցառման ընթացքում Արմեն Դարյանի գրական ժառանգության, նրա մարդկային տեսակի ու անսահման հայրենասիրությանն անդրադարձան ելույթ ունեցողները՝ Հենրիկ Բախչինյանը, «Մոմջյան» հիմնադրամի նախագահ Ռոմեն Կոզմոյանը, սփյուռքահայ գրող Մանվել Ադամյանը, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, նշելով Արմեն Դարյան ոչ միայն գրականության ականառու դեմքի, այլեւ նրա մարդկային տեսակի, բարության, մեղմության, խաղաղասեր բնավորության գծերի մասին: Արմեն Դարյանը ապրել եւ ստեղծագործել է իսկական մտավորական հային վայել կյանքով՝ կիսել լիբանանահայության եւ մայր հայրենիքի հոգսն ու ցավը, վիշտն ու ուրախությունը: Նրա ապրած 68 տարիները լեցուն են եղել գրական, մշակութային հարուստ էջերով: Կյանք, որտեղ ասելիքն ու անելիքը շատ-շատ էին՝ հայասեր, հայրենասեր մի անձի համար:**

**Միջոցառման ընթացքում ընթերցվեցին Արմեն Դարյանի նամակներից, որոնք ուղղված էին մեր ժամանակի անվանի մտավորականներին: Հունիսի 21-ը Արմեն եւ Արսինե Դարյանների ծննդյան օրը նման շնորհանդես կազմակերպելը յուրօրինակ նվեր ու երախտագիտություն է՝ սիրված հայրենանվեր ու հայրենասեր ամուսիններին: Տկն Արսինեն շնորհակալություն հայտնեց բացառիկ երեկոյի, գրքի հրատարակման ու նաեւ՝ ճիշտ այս օրը Հայաստանում շնորհանդեսը կազմակերպելու համար, որի մասին տարիներ առաջ երազել էր ամուսինը: Նշենք, որ հաջորդ տարի լրանում է անվանի գրողի ծննդյան 90-ամյակը եւ այդ առիթով ընթերցողների դատին կհանձնվի Արմեն Դարյանի նոր հատընտիրը:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը փառատոնի մրցանակակիր

Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչությունը, ավանդույթի համաձայն, մայիսի 13-21-ը կազմակերպել էր ամենամյա երաժշտական մրցույթ-փառատոն, որին մասնակցել են Երեւանի 25 երաժշտական եւ արվեստի դպրոցների մոտ 2000 երեխաներ: Փառատոնի նպատակն է՝ մայրաքաղաքի երաժշտական եւ արվեստի դպրոցների այս տարվա աշխատանքների գնահատում եւ խրախուսում, երաժշտական արվեստի զարգացման գործունեության օժանդակում եւ տարածում: Մեկ փուլով անցկացվող մրցույթ-փառատոնին հիմնականում ներկայացվել են դաշնամուր, լարային նվագարաններ, կիթառ, ժողովրդական, փողային եւ հարվածային գործիքներ, մեներգեցողություն (դասական, ժողովրդական), երգչախումբ, համույթներ, սոլֆեջիո՝ թելադրություն, երաժշտական գրականություն (վիկտորինա): Մասնագիտական ժյուրիի նախագահն է եղել ՀՀ մշակույթի վաստ. գործիչ, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը: Մրցույթում առավելագույն միավորներ հավաքած 10 լավագույնները ընդգրկվել են «Լավագույն տասնյակ» սահմանված անվանակարգում:



Առաջին պատվավոր տեղը՝ բացարձակ միավորներով զբաղեցրել է Երեւանի քաղաքապետարանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցը, որն արժանացել է դիպլոմի, մրցույթի խորհրդանիշ արձանիկի եւ 1 միլիոն դրամի:

Երկրորդ տեղում է Ղազարոս Սարյանի անվ. արվեստի դպրոցը: Մրցույթ-փառատոնի երկու մասնակից ճանաչվել են տարվա հայտնություն՝ Անուշավան Տեր-Ղեւոնդյանի անվ. երաժշտ. դպրոցի ջութակի 1-ին դասարանի սան Վրույր Ասատրյանը (դասատու՝ Հրաչյա Հակոբյան) եւ Ալ. Սպենդիարյանի անվ. երաժշտ. մասնագիտական դպրոցի շվիի 1-ին դասարանցի Անի Ռուբենյանը (դասատու՝ Խորեն Ումրիկյան):

Հունիսի 20-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կայացել է մրցույթ-փառատոնի գալա համերգը եւ մրցանակաբաշխությունը:

Ս. Ս.

# Մինասի որմնանկարները վերադարձնելու պահանջագիրն ուղարկվեց ՀՀ վարչապետին

**Գյումրիից Մինասի որմնանկարների տեղափոխման ՀՀ կառավարության նախաձեռնությունը բուռն բողոքի ալիք է բարձրացրել գյումրեցիների շրջանում, տեղեկացնում է «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Գյումրեցի մշակույթի գործիչների եւ քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների նախաձեռնությամբ կազմակերպվել է քաղաքից տեղափոխված չորս որմնանկարները վերադարձնելու պահանջով ստորագրահավաք:**

**Ստորագրահավաքի առաջին փուլով, 4053 ստորագրություններով պահանջագիրը «Շիրակ կենտրոն» ՀԿ-ն պաշտոնական գրությամբ արդեն ուղարկել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին: Ստորագրահավաքը շարունակվում է, ցանկացողները կարող են միանալ:**


# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ Տնտեսական հետազոտությունների վարչության **«տնտեսագետ-հետազոտող»** թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** Միկրոտնտեսական եւ մակրոտնտեսական մակարդակներում գիտահետազոտական աշխատանքների իրականացում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Առաջադրված թեմայով գիտահետազոտական ավարտուն աշխատանքի իրականացում, որը ներառում է.

◆ ՀՀ դրամավարկային, ֆինանսական, բանկային եւ տնտեսության տարբեր ոլորտների եւ ուղղությունների վերաբերյալ հետազոտությունների եւ գործնական վերլուծությունների իրականացում՝ կիրառելով ժամանակակից հավանականային եւ վիճակագրական մեթոդներ, ընդհանուր եւ մասնակի հավասարակշռության մոդելների կառուցման սկզբունքներ եւ հաշվողական ծրագրային փաթեթներ:

◆ Տնտեսագիտական տարբեր թեմաներով գիտահետազոտական աշխատանքների գործնական կիրառության միջազգային փորձի ուսումնասիրում եւ ամփոփում;

◆ Հետազոտական աշխատանքների եւ վերլուծությունների ներկայացում սեմինարներում, կոնֆերանսներում եւ հրատարակում մասնագիտական ամսագրերում:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում (հետազոտական ոլորտում (ներառյալ արտասահմանյան ԲՈՒՀ-երում դոկտորի կոչում ստացած դիմորդների ուսումնառության տարիները)):

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 6 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում (հետազոտական ոլորտում (ներառյալ արտասահմանյան ԲՈՒՀ-երում դոկտորի կոչում ստացած դիմորդների ուսումնառության տարիները)):

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ մակրոտնտեսագիտություն (խորացված), միկրոտնտեսագիտություն (խորացված), դրամավարկային տեսություն (խորացված), մաթեմատիկական մոդելներ տնտեսագիտության մեջ (խորացված), էկոնոմետրիկա եւ հավանականային մեթոդների կիրառումը տնտեսագիտության մեջ (խորացված), տնտեսական վիճակագրություն (միջանկյալ):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, Matlab, Eviews):

**Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝** 2011թ. հուլիսի 07-ը

**Աշխատավարձը՝** 287 000 դրամ (չհարկված)

**Պահանջվող փաստաթղթերը.**

Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am «Թափուր աշխատատեղեր» բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում ): Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով: Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

*Հասարակայնության հետ կապերի ծառայություն*

# Մարզական

## Գինեսի ռեկորդակրի նոր նվաճումը

### *Դավիթ Փահրադյանը կրկին իրեն վերադարձրեց ռեկորդը*



Երեկ մարդաշատ էր Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության մարզադպրոցի մարզադահլիճը, որտեղ հավաքվածները եկել էին ականատես լինելու Գինեսի գրքի կրկնակի ռեկորդակիր, Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի դասախոս **Դավիթ Ֆահրադյանի** հերթական ռեկորդի գրանցմանը: Մեկ ամիս առաջ անգլիացիներից մեկը գերազանցել էր Դավիթ Ֆահրադյանի «Պտտաձողի վրա մեծ պտույտ հետ» վարժության ռեկորդը (350 պտույտ)՝ կատարելով 403 պտույտ: Եվ ահա Դավիթը որոշել էր կրկին իրեն վերադարձնել ռեկորդը: Նա վստահ սկսեց վարժությունը ու որոշ ժամանակ անց դահլիճը թնդաց ծափահարություններից ի պատիվ Ֆահրադյանի, որը նոր ռեկորդ սահմանեց՝ կատարելով 450 պտույտ:

Մի փոքր շունչ քաշելով եւ ընդունելով շնորհավորանքները, Դավիթը սիրով իր տպավորությունները կիսեց լրագրողների հետ զրույցում. «Բավականին դժվար ստացվեց, քանի որ գրեթե մեկ ամիս չէի մարզվել պտտաձողի վրա: Այսօր նպատակ էի դրել թարմացնելու ռեկորդը եւ ջանք չխնայեցի առաջադրանքը կատարելու համար, քանի որ նահանջի ճանապարհ չկար: 200 պտույտից հետո կողս սկսեց մի փոքր ցավել, բայց դիմացա ու թարմացրեցի ռեկորդը, որը կրկին ինձ է պատկանում: Հոգեբանորեն լավ էի նախապատրաստվել: Մինչեւ 2015-ը պաշտոնական պայմանագիր ունեմ Գինեսի ռեկորդների գրքի հանձնաժողովի հետ, ըստ որի, եթե որեւէ մեկը նույնիսկ 1 պտույտով գերազանցի ռեկորդս, ապա պարտավոր եմ նախապատրաստվել այդ ցուցանիշի գերազանցմանը: Անգլիացու ռեկորդը դեռեւս չի գրանցված, փաստաթղթային հարցեր կան: Իմ պարագայում նման խնդիր չկա: Որպես Գինեսի ռեկորդակիր, ես անձնական կոդ ունեմ, որով էլ այս նվաճման տեսանյութերը կուղարկվեն Լոնդոն եւ ռեկորդը կգրանցվի: Կարծում եմ ուժերիս ներածի չափով հետագայում բարելավել ցուցանիշս: Սա ինձ համար բարոյական հաղթանակ է, քանի որ ներկայացնում եմ Հայաստանը, մեր ազգն ու համալսարանը: Սա ընդհանուր մեր ազգի հաղթանակն է»:

Հիշեցնենք, որ Դավիթ Ֆահրադյանը Գինեսի ռեկորդների գրքում իր առաջին ռեկորդը սահմանել էր 2009-ի հուլիսի 21-ին: Նա «մեծ պտույտ հետ տարրը» պտտաձողի վրա կատարել էր 350 անգամ: 2010-ի նոյեմբերի 13-ին Դավիթը 2-րդ ռեկորդը սահմանեց՝ պտտաձողի վրա մեկ ձեռքով պտտվելով 76 անգամ:

Ինչպես հայտնի է, Հայաստանում Գինեսի գրքի օրինակով գործում է «Դյուցազնագիրքը»: Ինչպես տեղեկացանք Արտասովոր շարժողական գործունեության գրանցման հանձնախմբի նախագահ Վարդան Թովմասյանից, այսօր «Դյուցազնագրքում» մոտ 60 հոգու անուն է գրանցված: Բացի մարզական նվաճումներից, այնտեղ գրանցված են նաեւ արտասովոր ունակություններով օժտված մարդկանց յուրօրինակ դրսեւորումները: «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի միջոցներով առաջին անգամ Հայաստանում կիրառարկվի «Դյուցազնագիրքը»:

## Նալբանդյանը սկսեց հաղթանակով

Լոնդոնում մեկնարկել է թենիսի «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքի 3-րդ մրցաշարը՝ Ուիմբլդոնը: Մեկնարկը հաջող էր Դավիթ Նալբանդյանի համար, որը պարտության մատնեց գերմանացի Յուլիան Ռայստերին (7-5, 6-2, 6-3): Առանց մեծ ճիգեր գործադրելու առաջին փուլի արգելքը հաղթահարեց «Ռոլան Գարոսի» հաղթող Ռաֆայել Նադալը, որի մրցակիցն ամերիկացի Մայքլ Ռասելն էր (6-4, 6-2, 6-2): Մեկնարկը հաջող էր նաեւ Նովակ Ջոկովիչի համար, որը պարտության մատնեց ֆրանսիացի Ժերեմի Շարդիին (6-4, 6-1, 6-1): Ռոջեր Ֆեդերերն էլ պայքարից դուրս մղեց ղազախստանցի Միխայիլ Կուկուշկինին (7-6, 6-4, 6-2): Երկրորդ փուլի ուղեգիր նվաճած թենիսիստների թվում են նաեւ Միխայիլ Յուժնին, Բեռնարդ Տոմիչը, Մարդի Ֆիշը, Էնդի Մարեյը, Ջոն Իսները:

## Հայ բռնցքամարտիկները միայն մեկ մեդալ կնվաճեն

Բռնցքամարտի Հայաստանի հավաքականը Եվրոպայի առաջնությունից տուն կվերադառնա միայն մեկ մեդալով: Քառորդ եզրափակիչում հանդես եկած 3 հայ բռնցքամարտիկներից միայն Վլադիմիր Սարուխանյանին ուղեկցեց հաջողությունը: Մինչեւ 60 կգ քաշայինների մրցավեճում Սարուխանյանը հաղթեց անգլիացի Մարտին Ուարդին եւ իր համար ապահովեց նվազագույնը բրոնզե մեդալ: Այսօր կայանալիք կիսաեզրափակիչ մենամարտում հայ բռնցքամարտիկը կմրցի թուրք Ֆաթիհ Կելեսի հետ:

Եվրոպայի չեմպիոնի լիազորությունները վայր դրեց Հրաչյա Ջավախյանը (64 կգ)՝ զիջելով անգլիացի Թոմաս Ստալկերին: Մեդալների համար պայքարից դուրս մնաց նաեւ Արթուր Խաչատրյանը (75 կգ), որը պարտվեց վրացի Ջաբա Խոսիտաշվիլուն:

## Մկրտչյանն անդրանիկ պարտությունը կրեց

Հունգարիայում ավարտվեց Դյորդ Մարոցիի 9-րդ հուշամրցաշարի առաջին շրջանը: Ցավոք, 5-րդ տուրն անհաջող էր միանձնյա առաջատար Լիլիթ Մկրտչյանի համար, որն անդրանիկ պարտությունը կրեց Ալինա Կաշլինսկայայի հետ մրցավեճում: Այդ պարտության պատճառով Լիլիթը 3 միավորով զիջեց առաջատարի դերը Կաշլինսկայային, որը կես միավորով առաջ անցավ հայ շախմատիստուհուց:

Տուրի մյուս երկու պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Աննա Շարեւիչն ու Իլդիկո Մադլը, Աննա Ռուդոլֆն ու Էսթեր Դուդասը: Շարեւիչն ու Ռուդոլֆը վաստակել են 2,5-ական միավոր, Մադլն ունի 2 միավոր: Աղյուսակը եզրափակում է 1,5 միավոր վաստակած Դուդասը:

Այսօր սկսվող 2-րդ շրջանի մեկնարկային տուրում Լիլիթ Մկրտչյանը սեւերով կխաղա Իլդիկո Մադլի հետ:

## Սուրեն Պետրոսյանը գլխավորում է աղյուսակը

Ռումինիայի Էֆորիա քաղաքում մեկնարկած շախմատի մրցաշարում հաջող է հանդես գալիս միջազգային վարպետ Սուրեն Պետրոսյանը: Նա մրցաշարի 50 մասնակիցների մեջ իր վարկանիշով (2392) 10-րդն է: Մասնակիցների ցանկը գլխավորում է Հոլանդիան ներկայացնող Սերգեյ Տիվյակովը (2622), որին հաջորդում են բելառուս Ալեքսեյ Ֆյոդորովը (2592) եւ Բելգիայում բնակվող Վադիմ Մալախատկոն (2546):

Հայ շախմատիստը մեկնարկային 2 պարտիաներում էլ առավելության է հասել Վիրգիլիու Տանասեսկուի եւ Վլադ Տեզգարիուի նկատմամբ: 2 տուրից հետո Սուրեն Պետրոսյանը 8 շախմատիստների հետ 2 միավորով գլխավորում է աղյուսակը:

## Անհաջող մեկնարկ

Բուլղարիայում մեկնարկած ֆուտբոլի միջազգային մրցաշարը շատ անհաջող սկսեց Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը: Մեր ֆուտբոլիստները 0-4 հաշվով պարտվեցին ռումինացիներին: Այսօր մեր պատանիները ուժերը կչափեն Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի հետ:

## Հերթը հասավ Ժոաո Ավելանժին

ՖԻՖԱ-ի շուրջ կոռուպցիոն նոր սկանդալ է հասունանում: ՄՕԿ-ի էթիկայի հանձնախումբը սկսել է հետաքննել ՖԻՖԱ-ի նախկին նախագահ, 95-ամյա Ժոաո Ավելանժի գործը: 1963-ից ՄՕԿ-ի անդամ Ժոաո Ավելանժը մեղադրվում է ՖԻՖԱ-ի նախկին գործընկեր International Sport and Leisure ֆիրմայից 1997-ին 1 մլն դոլար կաշառք ստանալու մեջ: Այդ ֆիրման ՖԻՖԱ-ի հետ բանակցություններ էր վարում աշխարհի առաջնության խաղերի հեռուստահեռարձակման իրավունքի ձեռքբերման հարցի շուրջը, սակայն 2001-ին սնանկացել էր: 2008-ին այդ ֆիրմայի 6 մենեջերները մեղադրվել էին ֆինանսական միջոցներն անհարկի վատնելու մեջ, սակայն հետագայում մեղադրանքը հանվել էր:

ՄՕԿ-ը հիմք է ընդունել անցյալ տարվա նոյեմբերին BBC հեռուստաալիքով ցուցադրված հաղորդումը, որի հեղինակները պնդել էին, թե Զեպ Բլատերը տեղյակ է եղել այդ կաշառքի մասին, սակայն լռել է: ՖԻՖԱ-ն հրաժարվել էր հետաքննել այդ տեղեկատվությունը: Ժոաո Ավելանժն էլ մինչ օրս չի մեկնաբանել իր հասցեին հնչած մեղադրանքը: ՄՕԿ-ի հետաքննությունը կարող է կոռուպցիոն ամենամեծ սկանդալը դառնալ ՖԻՖԱ-ի համար: Բրազիլացի Ժոաո Ավելանժը ՖԻՖԱ-ն գլխավորել է 1974-1998-ը: 1998-ին նա հեռացավ ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնից՝ իր տեղը զիջելով Զեպ Բլատերին: Նշենք, որ Բլատերը 1981-1998-ին զբաղեցրել է ՖԻՖԱ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնը:

ՇԱԽՄԱՏ

## Հայ շախմատիստներից երեքը դրամական պարգեւներ ստացան



**Վորոնեժում ավարտվեց շախմատային փառատոնը, որի գլխավոր մրցաշարը նվիրված էր շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի հիշատակին: Ավարտական տուրից առաջ 5 շախմատիստներ, որոնց թվում էր նաեւ Գեւորգ Հարությունյանը, 6 միավորով գլխավորում էին աղյուսակը: Ցավոք, 9-րդ տուրում Գեւորգ Հարությունյանն անհաջողության մատնվեց Դմիտրի Կոկարեւի հետ պարտիայում: Հենց այդ մրցավեճն էլ վճռորոշ եղավ գլխավոր մրցանակի համար պայքարում, քանի որ մյուս առաջատարներն ընդամենը կեսական միավոր վաստակեցին: Ալեքսանդր Ռահմանովը հաշտություն կնքեց Եվգենի Շապոշնիկովի հետ, իսկ Անդրեյ Դեւյատկինը ոչ-ոքի խաղաց Զավեն Անդրեասյանի հետ մրցավեճում:**

**Այսպիսով, 9 հնարավորից վաստակելով 7 միավոր, Վորոնեժի մրցաշարի հաղթող ճանաչվեց ռուսաստանցի գրոսմայստեր Դմիտրի Կոկարեւը: Նա արժանացավ 130 հազար ռուբլի դրամական պարգեւի: 7 շախմատիստներ վաստակեցին 6,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով 2-րդ տեղը գրավեց ռուսաստանցի Ալեքսանդր Ռահմանովը՝ պարգեւատրվելով 100 հազար ռուբլով: 3-րդ տեղը զբաղեցրեց ռուսաստանցի Եվգենի Շապոշնիկովը, որին հանձնվեց 80 հազար ռուբլի:**

**Հայ շախմատիստներից լավագույն արդյունքը ցույց տվեցին Գեւորգ Հարությունյանն ու Զավեն Անդրեասյանը, որոնք վաստակեցին 6-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով Զավեն Անդրեասյանը գրավեց 10-րդ տեղը: Գեւորգ Հարությունյանը զբաղեցրեց 12-րդ հորիզոնականը: Զավենը պարգեւատրվեց 20 հազարով որպես օտարերկրացի շախմատիստների մեջ լավագույն արդյունքը ցույց տված մասնակից: Իսկ Հարությունյանը 12-րդ տեղի համար ստացավ 20 հազար ռուբլի:**

**Մրցաշարին մասնակցած շախմատիստուհիներից լավագույն արդյունքի հասավ Լիլիթ Գալոյանը: Ավարտական տուրում սեւերով հաղթելով Ալեքսանդր Լենտեւին, Լիլիթը 9 հնարավորից վաստակեց 5,5 միավոր: Նա պարգեւատրվեց 20 հազար ռուբլով: 2-րդ ցուցանիշը ցույց տվեց ռուսաստանցի Յուլիա Դոգոդինան (4,5 միավոր)՝ պարգեւատրվելով 15 հազարով: Ռուսաստանցի Իրինա Սեմյոնովան եւս վաստակեց 4,5 միավոր ու պարգեւատրվեց 10 հազար ռուբլով:**

**Իր հնարավորությունները լիովին չբացահայտեց Նելլի Աղինյանը, որը վաստակեց ընդամենը 3,5 միավոր: Ավարտական տուրում նա պարտվեց Իրինա Բարաեւային: Ռուսաստանցի Արթուր Գաբրիելյանը, որ մրցաշարի ընթացքում առաջատարների խմբում էր, վերջնագծում զիջեց դիրքերը: Վերջին տուրում պարտվելով Ալեքսեյ Պեսկովին, Արթուրը 5,5 միավորով գրավեց 16-րդ տեղը: 5 միավոր վաստակեց Գեւորգ Հայրապետյանը՝ ոչ-ոքի խաղալով Դմիտրի Զուբրիկովի հետ: Ամենացածր արդյունքը գրանցվեց Էդուարդ Բարսամյանի օգտին, որը վաստակեց 3 միավոր:**

## Ղազարյանը նորամուտը նշեց գոլով

**Ինչպես եւ սպասվում էր, Գեւորգ Ղազարյանն ու Մարկոսն իրենց նորամուտը նշեցին Դոնեցկի «Մետալուրգի» կազմում, որն Ավստրիայում հերթական ստուգողական խաղում ուժերը չափեց հունգարական «Ույպեշտի» հետ: «Փյունիկի» ֆուտբոլիստները բավական լավ դրսեւորեցին իրենց: Մասնավորապես Մարկոսը գոլային մի քանի վտանգավոր պահեր ստեղծեց մրցակցի դարպասին, սակայն չկարողացավ դրանցից ոչ մեկն իրացնել: Իսկ ահա Գեւորգ Ղազարյանն ավելի հաջողակ գտնվեց՝ 34-րդ րոպեին բացելով հաշիվը: «Մետալուրգը» հաղթեց 2-0 հաշվով: Հանդիպմանը մասնակցեց նաեւ Կառլեն Մկրտչյանը՝ մտնելով փոխարինման:**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ Տնտեսական հետազոտությունների վարչության **«տնտեսագետ»** թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն** է. Միկրոտնտեսական եւ մակրոտնտեսական մակարդակներում գիտահետազոտական աշխատանքների իրականացում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Առաջադրված թեմայով գիտահետազոտական ավարտուն աշխատանքի իրականացում, որը ներառում է.

◆ ՀՀ դրամավարկային, ֆինանսական, բանկային եւ տնտեսության տարբեր ոլորտների եւ ուղղությունների վերաբերյալ հետազոտությունների եւ գործնական վերլուծությունների իրականացում՝ կիրառելով ժամանակակից հավանականային եւ վիճակագրական մեթոդներ, ընդհանուր եւ մասնակի հավասարակշռության մոդելների կառուցման սկզբունքներ եւ հաշվողական ծրագրային փաթեթներ:

◆ Տնտեսագիտական տարբեր թեմաներով գիտահետազոտական աշխատանքների գործնական կիրառության միջազգային փորձի ուսումնասիրում եւ ամփոփում;

◆ Հետազոտական աշխատանքների եւ վերլուծությունների ներկայացում սեմինարներում եւ կոնֆերանսներում:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

Բարձրագույն տնտեսագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում (հետազոտական ոլորտում (ներառյալ արտասահմանյան ԲՈՒՀ-երում մագիստրոսի կոչում ստացած դիմորդների ուսումնառության տարիները)):

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում (հետազոտական ոլորտում (ներառյալ արտասահմանյան ԲՈՒՀ-երում մագիստրոսի կոչում ստացած դիմորդների ուսումնառության տարիները)):

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ մակրոտնտեսագիտություն (միջանկյալ), միկրոտնտեսագիտություն (միջանկյալ), դրամավարկային տեսություն (միջանկյալ), մաթեմատիկական մոդելներ տնտեսագիտության մեջ (միջանկյալ), էկոնոմետրիկա եւ հավանականային մեթոդների կիրառումը տնտեսագիտության մեջ (միջանկյալ), տնտեսական վիճակագրություն (միջանկյալ):

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացություն (ռուսերեն եւ անգլերեն լեզուները՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, վիճակագրական ծրագրեր):

**Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝** 2011թ. հուլիսի 07-ը

**Աշխատավարձը՝** 220 600 դրամ (չհարկված)

**Պահանջվող փաստաթղթերը.**

Դիմումի ձեւ (Ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am «Թափուր աշխատատեղեր» բաժնում կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում ): Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով: Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

*Հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**ՖԻՆԱՆՍՆԵՐ**

# «Արարատբանկի» զուտ շահույթն ավելացել է ավելի քան 250 տոկոսով

## *2010 թվականը բանկն ամփոփել է բոլոր ցուցանիշների գծով բարձր աճով*

«Արարատբանկի» տարեկան ժողովը երեկ տեղի ունեցավ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում: Ժողովը բացեց եւ ներկաներին ողջունեց բանկի խորհրդի նախագահ **Բարսեղ Բեգլարյանը**: Նշելով, որ տարեկան ժողովին ներկա է բանկի բաժնետերերի ավելի քան 99 տոկոսը, նա խոսքը փոխանցեց Կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյանին**:

Կենտրոնական բանկի նախագահը նշեց, որ «Արարատբանկն» իր ուրույն տեղն է գրավում Հայաստանի բանկային համակարգում՝ յուրաքանչյուր տարի ապահովելով թե՛ քանակական, թե՛ որակական աճ: Ըստ ԿԲ նախագահի, վերջին երեք տարիներին բանկի ակտիվներն աճել են միջին տարեկան ավելի քան 40 տոկոսով: Բանկն առաջին կորպորատիվ թողարկողն է Հայաստանում, արձանագրել է վարկերի 100 տոկոս վերադարձվելիություն, ունի մասնաճյուղերի լայն աշխարհագրություն եւ հետեւաբար՝ ներկայացվածություն Հայաստանի մեծաթիվ բնակավայրերում:

Բանկի տարեկան գործունեության արդյունքները ներկայացրեց վարչության նախագահ **Աշոտ Օսիպյանը**: Ըստ այդմ, 2010-ին 2009-ի համեմատ բանկի ակտիվներն ավելացել են 44,8 տոկոսով՝ հասնելով 62,9 մլրդ դրամի, վարկային ներդրումներն ավելացել են 57 տոկոսով՝ հասնելով 25,2 մլրդ դրամի: Ըստ Աշոտ Օսիպյանի՝ ամենամեծ վարկավորումը ստացել է փոքր ու միջին բիզնեսը, ապա հիպոթեկային շուկան եւ խոշոր վարկառուները: Այնուհետեւ ներգրավված ավանդներն ավելացել են 54 տոկոսով՝ հասնելով 23,2 մլրդ դրամի: Բանկի զուտ շահույթն ավելացել է ավելի քան 250 տոկոսով՝ 2010-ի տարեվերջին կազմելով 1 մլրդ 279 մլն դրամ: Այդ գումարից 248,5 մլն դրամն ուղղվելու է բանկի բաժնետերերին շահաբաժիններ տրամադրելուն: 1 բաժնետոմսի զուտ տարեկան շահույթը կազմել է 1123 դրամ, իսկ բաժնետոմսի անվանական արժեքը 5 հազար դրամ է:

«Արարատբանկի» վարչության նախագահը տեղեկացրեց նաեւ, որ անցյալ տարի բանկը թողարկել է նոր պլաստիկ քարտեր՝ VISA, Master, իսկ թողարկած քարտերի ընդհանուր թիվն ավելացել է 37,5 տոկոսով, հասնելով 52,4 հազարի: Աշոտ Օսիպյանը հայտնեց, որ 2011-ին բանկը շարունակելու է փնտրել նոր ոլորտներ, որտեղ դեռ չկա մրցակցություն: Նա հույս հայտնեց, որ 2011-ը «Արարատբանկը» կեզրափակի նոր հաջողություններով:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**


**Վաճառվում է**
**LADA Priora**

մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մգեցված) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:

**Հեռ.՝ (094) 401-337**


## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**առ 01.01.2011 թ.**

| | | ծածկագիրը | |
|---|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Գրանդ Տոբակո» ՀՋ ՍՊԸ | 37340274 | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Սիգարետի արտադրություն | 16001 | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 269.110.01588 | |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 02216066 | |
| Չափի միավորը | | հազ. դրամ | |
| Գտնվելու վայրը | ք. Երեւան, Շահամիրյանների 22 | հեռախոսը | 44-39-93 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Երեւան, Շահամիրյանների 22 | հեռախոսը | 44-39-93 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Հիմնական միջոցներ | 010 | 3,902,473 | 4,234,660 |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 15,931 | 16,366 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառող ներդրումներ | 040 | 4,800,330 | 330 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 050 | 7,723,364 | 8,967,613 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 070 | - | 30,540 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 16,442,098 | 13,249,509 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Նյութեր | 090 | 7,260,197 | 6,476,524 |
| Արագամաշ առարկաներ | 110 | 803 | 1,172 |
| Անավարտ արտադրություն | 120 | 52 | - |
| Արտադրանք | 130 | 15,796 | 8,443 |
| Ապրանքներ | 140 | 229,367 | 210,942 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | 305,809 | 444,492 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 160 | 852,459 | 5,090,208 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 295,317 | 39,459 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 15,084 | 19,452 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 41,894 | 41,159 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | 70,988 | 3,932 |
| Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով | 211 | 70,988 | 3,932 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 9,087,766 | 12,335,783 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 25,529,864 | 25,585,292 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 6,000,000 | 6,000,000 |
| Կուտակված շահույթ | 270 | 13,175,995 | 13,787,150 |
| Պահուստային կապիտալ | 280 | 1,500,000 | 1,500,000 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 20,675,995 | 21,287,150 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | 1,951,000 | 2,068,555 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | 1,951,000 | 2,068,555 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | 617,666 | 27,590 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | 2,188,567 | 321,851 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 22,316 | 1,809,259 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 11,747 | 14,640 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 60,231 | 53,957 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | 2,342 | 2,290 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 2,902,869 | 2,229,587 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 25,529,864 | 25,585,292 |

*Ղեկավար* — *Հրանտ Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Մամյան Արտավիր*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ձեւ N 2*

**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 5,700,112 | 8,955,101 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (5,326,142) | (7,366,222) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 373,970 | 1,588,879 |
| Իրացման ծախսեր | 040 | (110,523) | (373,058) |
| Վարչական ծախսեր | 050 | (254,183) | (489,637) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 9,264 | 726,184 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 2,472,615 | 1,403,703 |
| - վարձակալությունից | 071 | 120,467 | 84,975 |
| - այլ | 072 | 2,352,148 | 1,318,728 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (1,687,441) | (1,350,843) |
| - այլ ակտիվների վաճառքից | 081 | (641,450) | (948,140) |
| - այլ | 082 | (1,045,991) | (402,703) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 794,438 | 779,044 |
| Ֆինանսական ծախսեր | 100 | (173) | (341) |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝ | 130 | 161,094 | 81,033 |
| - ա.թ. ոչ ընթացիկ ակտիվների իրացումից | 131 | 633 | 11,994 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 955,359 | 859,736 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 955,359 | 859,736 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (119,900) | (248,581) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 835,459 | 611,155 |

*Ղեկավար* — *Հրանտ Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Մամյան Արտավիր*

*20 մայիսի 2011*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
### «Գրանդ Տոբակո» ՀՋ ՍՊԸ-ի Մասնակիցներին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Գրանդ Տոբակո» Հ/Ջ Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության 31 դեկտեմբեր 2010 թ. դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք եւ իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեստային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար եւ իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

* Ընկերության կողմից 2010 թվականի ընթացքում հիմնական միջոցների վերագնահատումներ չեն իրականացվել, հետեւաբար 01.01.2011 թվականի դրությամբ հաշվապահական հաշվառման տվյալներով հիմնական միջոցների արժեքը հնարավոր է էականորեն տարբերվի դրանց իրական արժեքից:

Մեր կարծիքով բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասում հիշատակված հարցի ազդեցությունից, 2010 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են եւ տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը Ընկերության ֆինանսական վիճակի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

*Բաժնետեր՝ Գլխավոր տնօրեն Ա. Կիրակոսյան*

*Բաժնետեր՝ Աուդիտոր Խ. Բեգլարյան*

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*Ձեւ N 1*

**առ 01.01.2011 թ.**

| | | ծածկագիրը |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» ՍՊԸ | 39350650 |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | Մեծածախ եւ մանրածախ առեւտուր | |
| Պետական ռեգիստրում գրանցման համարը | | 77.110.01136 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 3811748 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ք. Մասիս, Գործարանային 14 | հեռ.՝ 28-17-62 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ք. Մասիս, Գործարանային 14 | հեռ.՝ 28-17-62 |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 150 | | 359083 |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | | 66 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | | 67724 |
| Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | 210 | | 16 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | | 426889 |
| Հաշվեկշիռ | 230 | | 426889 |

| ՊԱՍԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կուտակված շահույթ | 270 | | 109441 |
| Պահուստային կապիտալ | 280 | | 75 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | | 109516 |
| IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ | 310 | | 2950 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 360 | | 2950 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 390 | | 224010 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 400 | | 65426 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | | 24633 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով | 420 | | 53 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | | 301 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | | 314423 |
| Հաշվեկշիռ | 500 | | 426889 |

*Ղեկավար՝* — *ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Գլխավոր հաշվապահ՝* — *ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ձեւ N 2*

**2010 թ.**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | | 1212579 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների | 020 | | (1064052) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | | 148527 |
| Վարչական ծախսեր | 050 | (9833) | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | | 138694 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | | 52 |
| - այլ | 072 | | 52 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | | (1541) |
| - այլ | 082 | | (1541) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | | 137205 |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 130 | | 20 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | | 137225 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | | 137225 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | | (27709) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | | 109516 |

*Ղեկավար՝* — *ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
*Գլխավոր հաշվապահ՝* — *ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆ*

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
### «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» ՍՊԸ-ի մասնակցին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «Մասիս Իմպորտ-Էքսպորտ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 31 դեկտեմբեր 2010 թ. դրությամբ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները: Այդ ֆինանսական հաշվետվութունների կազմման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին եւ գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների եւ բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեստային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար եւ իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, 2010 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաեւ՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավաս են եւ տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը Ընկերության ֆինանսական վիճակի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

*Բաժնետեր Գլխավոր տնօրեն՝* — *Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*
*Բաժնետեր Աուդիտոր՝* — *Խ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.6.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: